




**UK International  
Development**

Partnership | Progress | Prosperity



ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ԱՆՁՆԱԿԱՆ  
ՏՎՅԱԼՆԵՐԻ  
ՊԱՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ**



**ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ  
ՄՇԱԿՄԱՆ  
ԻՐԱԿԱԿԱՐԳԱԿՈՐՈՒՄՆԵՐԸ  
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ  
ՄՇԱԿՄԱՆ  
ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ  
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՁԵՌՆԱՐԿ

Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն  
ՅՈՒՆԻՍԵՖ  
Երևան 2024

**ՀՏԳ 347:342:37.0(07)**  
**ԳՄԳ 67.4+74.0g7**  
**Մ 151**

Ձեռնարկը պատրաստվել է Միացյալ Թագավորության կառավարության ֆինանսական աջակցությամբ՝ ՄԹ միջազգային զարգացման շրջանակում: Ձեռնարկում արտահայտված կարծիքները պատկանում են ձեռնարկի հեղինակներին և հնարավոր է ոչ միշտ համընկնեն ծրագիրն իրականացնող կազմակերպությունների, Միացյալ Թագավորության կառավարության պաշտոնական քաղաքականության կամ պաշտոնական դիրքորոշման հետ:

**Ծրագրի աջակից՝** «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

**Ծրագրի համակարգող՝**

**Գրիգոր Ներսիսյան**

Անձնական տվյալների պաշտպանության գործակալության պետ

**Խորհրդատու՝**

**Վիգեն Սահակյան**

Անձնական տվյալների պաշտպանության վարչական վարույթների իրականացման բաժնի պետ

**Մաթևոսյան Զուլիետա, Սիմոնյան Սիմոն**

**Մ 151** Անձնական տվյալների մշակման իրավակարգավորումները ուսումնական հաստատություններում / Չ. Մաթևոսյան, Ս. Սիմոնյան; Ծրագրի համակարգող՝ Գ. Ներսիսյան; Խորհրդատու՝ Վ. Սահակյան.- Եր.: Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն, 2024.- 80 էջ:

**ՀՏԳ 347:342:37.0(07)**  
**ԳՄԳ 67.4+74.0g7**

**ISBN 978-9939-1-1944-1**

© Անձնական տվյալների պաշտպանության  
գործակալություն, 2024  
© ՅՈՒՆԻՍԵՖ, 2024



## Բովանդակություն

Ներածություն .....	5
<b>1. Անձնական տվյալների պաշտպանության հիմնական հասկացությունները.....</b>	<b>7</b>
1.1. Անձնական տվյալ .....	7
1.2. Անձնական տվյալների սուբյեկտ .....	9
1.3. Անձնական տվյալների մշակում .....	10
1.4. Անձնական տվյալներ մշակող .....	14
<b>2. Անձնական տվյալների մշակման սկզբունքները.....</b>	<b>18</b>
2.1. Օրինականության սկզբունք .....	19
2.2. Համաչափության սկզբունք .....	23
2.3. Թափանցիկության սկզբունք .....	26
2.4. Անձնական տվյալների մշակման անվտանգության սկզբունքը .....	29
2.5. Հավաստիության սկզբունք .....	32
2.6. Երեխայի լավագույն շահի սկզբունք .....	33
<b>3. Անձնական տվյալների մշակման իրավական հիմքերը.....</b>	<b>37</b>
3.1. Անձնական տվյալների մշակումն օրենքով ուղղակիորեն նախատեսված լինելը .....	37
3.2. Տվյալների սուբյեկտի համաձայնությունը .....	41
<b>4. Ուսումնական հաստատությունների կողմից անձնական տվյալների մշակումը .....</b>	<b>51</b>
4.1. Անձնական տվյալների հավաքումը .....	51



4.2. Անձնական տվյալների պահպանումը .....	54
4.3. Հատուկ կատեգորիայի և կենսաչափական անձնական տվյալների մշակման առանձնահատկությունները .....	56
4.4. Անձնական տվյալների փոխանցումը երրորդ անձանց .....	62
4.5. Անձնական տվյալների հրապարակումը .....	64
4.6. Տեսահսկումը ուսումնական հաստատություններում .....	65
<b>5. Անձնական տվյալներին ծանոթանալու, դրանք ուղղելու և ոչնչացնելու տվյալների սուբյեկտի իրավունքը.....</b>	<b>71</b>
5.1. Անձնական տվյալների վերաբերյալ տեղեկություններ ստանալու իրավունքը .....	71
5.2 Անձնական տվյալները ուղղելու և ջնջելու աշխատողի իրավունքը .....	72
<b>6. Անձնական տվյալներ մշակման օրինականության նկատմամբ հսկողությունը և պատասխանատվությունը .....</b>	<b>74</b>
6.1. Անձնական տվյալներ մշակելու օրինականության նկատմամբ հսկողությունը .....	74
6.2. Վարչական պատասխանատվությունը .....	76



## Ներածություն

Ներկայիս թվային ժամանակաշրջանում ուսումնական հաստատությունների գործունեությունը հիմնված է նորագույն տեխնոլոգիաների կիրառման, ինչպես նաև դրանց միջոցով մեծ քանակությամբ տեղեկությունների ստացման, ուսումնասիրության և փոխանցման վրա: Այդ տեղեկությունների շարքում առանձնահատուկ տեղ են գրավում անձնական տվյալները: Անձնական տվյալներ մշակելը, մի կողմից, անհրաժեշտ է ուսումնական հաստատությունների բնականոն գործունեությունն ապահովելու համար, մյուս կողմից, առնչվում է մարդու հիմնարար իրավունքներից մեկին՝ անձնական տվյալների պաշտպանության իրավունքին: Ուսումնական հաստատությունները իրենց աշակերտների, ուսուցիչների, այլ աշխատողների անձնական տվյալները պաշտպանելու նպատակով պարտավոր են հետևել, որ վերջիններիս անձնական տվյալները մշակվեն օրենսդրության պահանջներին համապատասխան:

Սույն ուղեցույցի նպատակն է ուսումնական հաստատություններին ծանոթացնել այն ուղենիշային և հիմնարար կանոններին, որոնք առկա են անձնական տվյալների պաշտպանության բնագավառում: Մասնավորապես, ուղեցույցի շրջանակներում մանրամասն ներկայացվել են անձնական տվյալների մշակման սկզբունքները, տվյալների սուբյեկտների իրավունքները, ուսումնական հաստատությունների պարտականությունները անձնական տվյալների պաշտպանության բնագավառում: Բացի այդ, հեղինակների կողմից քննարկվել են նաև թեմատիկ հարցեր, ինչպիսիք են տեսահսկումը, կենսաչափական և հատուկ կատեգորիաները:



րիայի անձնական տվյալների մշակումը: Ուղեցույցի կիրառումը կիսթանի ուսումնական հաստատություններում անձնական տվյալների պաշտպանության բարձր մակարդակ ապահովելուն, ինչպես նաև ուսումնական հաստատությունների շահառուների իրավունքների պաշտպանությանը:

Ուղեցույցը հիմնված է ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային իրավունքում անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ իրավակարգավորումների վրա: Հեղինակներն ուսումնասիրել են ոչ միայն անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ օրենսդրական նորմերը, այլև դրանց վերաբերյալ դատարանների, Եվրոպական միության մարմինների կողմից տրված մեկնաբանությունները: Հեղինակներն առաջնորդվել են նաև անձնական տվյալների պաշտպանության օրենսդրության վերաբերյալ ոլորտի լիազոր մարմնի՝ Անձնական տվյալների պաշտպանության գործակալության գործունեության ընթացքում ձևավորված դիրքորոշումներով:



# 1 ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն գլխում ներկայացվում են անձնական տվյալների պաշտպանության ոլորտի առանցքային նշանակություն ունեցող հասկացությունները<sup>1</sup>: Մասնավորապես, պարզաբանվում է, թե որ տեղեկություններն են համարվում անձնական տվյալներ, ինչ է անձնական տվյալի մշակումը, ովքեր են անձնական տվյալներ մշակողները և անձնական տվյալների սուբյեկտները:

## 1.1. Անձնական տվյալ

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենսգրքի համաձայն՝ անձնական տվյալ է համարվում *ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը*:

Վերը նշված սահմանումից հետևում է, որ անձնական տվյալներ են հանդիսանում բացառապես այն տեղեկությունները, որոնք վերաբերում են **ֆիզիկական անձին՝ մարդուն, և ունեն վերջինիս նույնականացնելու հատկություն**: Այսինքն՝ անձնական տվյալն ինքնին բնութագրվում է մարդուն նույնականացնելու հատկանիշով:

Անձնական տվյալի վկայակոչված սահմանման համաձայն՝ անձնական տվյալ է հանդիսանում՝

✓ **ֆիզիկական անձին ուղղակիորեն նույնականացնող տեղեկությունը**: Անձին ուղղակիորեն նույնականացնող տեղե-

<sup>1</sup> Սույն գլխում ներկայացված հասկացությունների սահմանումները նախատեսված են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենսգրքի 3-րդ հոդվածով:



կությունը կարող է ինքնուրույն և առանց այլ տեղեկությունների հետ համատեղ նույնականացնել մարդուն: Օրինակ՝ մարդու անունը, ազգանունը, նկարը, անձնագրի սերիան և համարը, ՀԾՀ-ն և այլն:

**✓ Ֆիզիկական անձին անուղղակիորեն նույնականացնող տեղեկությունը:**

Մարդուն անուղղակիորեն նույնականացնող տեղեկությունը, թեև հնարավորություն չի տալիս ինքնուրույն նույնականացնել մարդուն, սակայն կարող է այլ տեղեկությունների հետ համատեղ նույնականացնել մարդուն:



Օրինակ՝ դպրոցում առկա են նույն անուն-ազգանունով մի քանի աշակերտ, և նրանց միմյանցից տարբերակելու համար անվանը և ազգանվանը զուգահեռ համադրում են նաև նրանց հայրանունը կամ ծննդյան տարեթիվը: Հայրանունը և ծննդյան տարեթիվն անձին նույնականացնում են անուղղակիորեն և նույնպես հանդիսանում են անձնական տվյալներ:

Ներկայացնենք անձին անուղղակի նույնականացնող անձնական տվյալի ևս մեկ օրինակ:



Հրապարակման մեջ առանց անուն-ազգանվան նշվում է մարդու զբաղեցրած պաշտոնը, օրինակ՝ «Երևանի թիվ 22 դպրոցի տնօրեն»։ Տվյալ դեպքում մարդու զբաղեցրած պաշտոնով հնարավոր է որոնել և գտնել տնօրենի անունը և ազգանունը, որի արդյունքում կարելի է ճշգրիտ նույնականացնել տվյալ անձին, ուստի «Երևանի թիվ 22 դպրոցի տնօրեն» տեղեկությունը հանդիսանում է անձնական տվյալ:

## 1.2. Անձնական տվյալների սուբյեկտ

Տվյալների սուբյեկտն այն ֆիզիկական անձն է, որին վերաբերում (պատկանում) են մշակվող անձնական տվյալները: Ընդ որում, տվյալների սուբյեկտ են հանդիսանում **միայն ֆիզիկական անձինք (մարդիկ, անհատները)**, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերը:

- ◆ *Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, պետական և համայնքային կազմակերպությունները, հիմնարկները, ինչպես նաև իրավաբանական անձինք չեն կարող հանդես գալ որպես անձնական տվյալների սուբյեկտ:*

Հարկ է նշել, որ ուսումնական հաստատության կողմից մշակվող անձնական տվյալները, որպես կանոն, վերաբերում են տվյալների սուբյեկտների հետևյալ շրջանակին՝

- աշակերտներ և նրանց օրինական ներկայացուցիչներ<sup>2</sup> (երեխայի ծնող, խնամակալ, հոգաբարձու կամ որդեգրող),
- աշխատողներ, որոնք ներառում են մանկավարժական (ուսուցիչները) և վարչական (օր.՝ հաշվապահ, տնտես-

<sup>2</sup> ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ օրինական ներկայացուցիչ է համարվում երեխայի ծնողը, խնամակալը, հոգաբարձուն կամ որդեգրողը:



վար, անվտանգության աշխատակից, մաքրուհի և այլն) անձնակազմը,

- այլ ֆիզիկական անձինք, որոնց անձնական տվյալները ուսումնական հաստատությունը մշակում է տարաբնույթ իրավահարաբերությունների շրջանակներում (օր.՝ ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում դպրոցում վերանորոգում իրականացնող անձինք, դպրոցում տեղադրված տեսահսկման համակարգի տեսադաշտում հայտնված մարդիկ և այլն):



### Կարևոր է իմանալ.

*Թեև մինչև 16 տարին լրացած երեխայի անձնական տվյալները մշակելու համար համաձայնություն է տալիս նրա օրինական ներկայացուցիչը (օր.՝ ծնողը), սակայն տվյալների սուբյեկտ համարվում է ոչ թե օրինական ներկայացուցիչը, այլ հենց 16 տարին չլրացած անչափահասը:*

### 1.3. Անձնական տվյալների մշակում

Անձնական տվյալների մշակում է համարվում **անձնական տվյալների հետ կատարվող ցանկացած գործողություն**՝ անկախ ձևից և եղանակից (այդ թվում՝ ավտոմատացված տեխնիկական ցանկացած միջոցներ կիրառելու կամ առանց դրանց):

Մասնավորապես, անձնական տվյալների մշակում են համարվում անձնական տվյալների հետ կատարվող այնպիսի գործողությունները, ինչպիսիք են տվյալներ հավաքելը, մուտքագրելը, ամրագրելը, համակարգելը, վերափոխելը, ուղղելը, ուղեփակելը, օգտագործելը, պահպանելը, փոխանցելը կամ տվյալների հետ կատարվող ցանկացած այլ գործողություն: Անձնական տվյալների



մշակման մեջ ներառվող գործողությունների ցանկը սպառիչ չէ, ուստի **անձնական տվյալի հետ կատարվող ցանկացած գործողություն կամ գործողությունների ամբողջություն սահմանվում է որպես «անձնական տվյալների մշակում»:**

Անձնական տվյալների մշակում համարվող տվյալների հետ կատարվող գործողություններն առավել դյուրին պատկերացնելու համար ստորև ներկայացվում են ուսումնական հաստատության կողմից անձնական տվյալների մշակման առավել հաճախակի հանդիպող գործնական օրինակներ: Այսպես, ուսումնական հաստատությունը անձնական տվյալներ է մշակում, երբ՝

- երեխային դպրոցում ընդունելու համար երեխայի օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա ստանում և գրանցում է երեխայի և նրա օրինական ներկայացուցչի անձնական տվյալները (անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան տարեթիվ, բնակության վայր և այլ անհրաժեշտ տեղեկություններ),
- ուղղում կամ փոփոխում է իր աշխատակիցների, աշակերտների սխալ կամ հնացած տվյալները,
- դասակարգում է երեխաների անձնական գործերը՝ ըստ ընդունելության տարիների կամ դասարանների,
- պահպանում է համաձայնությամբ կամ օրենսդրությամբ սահմանված ժամկետներով աշխատատողների, աշակերտների անձնական գործերը, իսկ այդ ժամկետները լրանալուց հետո դրանք ոչնչացնում կամ արխիվացնում է,
- օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմնին է փոխանցում իր աշխատողների աշխատավարձերի մասին տեղեկություններ եկամտային հարկի հարկման նպատակով,



- սոցիալական ցանցի իր էջում կամ ինտերնետային կայք-էջում հրապարակում է ուսումնական հաստատությանն առնչվող կարևոր միջոցառումների վերաբերյալ տեղեկություններ, այդ թվում՝ միջոցառման մասնակիցների լուսանկարներ կամ տեսահոլովակներ: Օրինակ՝ դպրոցի որևէ ուսուցիչ միջազգային հեղինակավոր որևէ կառույցի կողմից ստացել է այս կամ այն ոլորտում որակավորման հավաստագիր և այդ մասին դպրոցի կայքէջում տեղադրվում է հրապարակում, որում նշված է այդ ուսուցչի անունը, ազգանունը, իր կողմից դասավանդվող առարկան և այլն,
- ուղղում կամ ոչնչացնում է իր աշակերտի մասին սխալ տեղեկությունները և այլն:



Անձնական տվյալների մշակումը իրականացվում է երկու եղանակով՝ **ավտոմատացված** և **ոչ ավտոմատացված** (մեխանիկական/ձեռքով): Ավտոմատացված մշակումը նշանակում է, որ անձնական տվյալները այս դեպքում թվային են և մշակվում են էլեկտրոնային եղանակով, այն է՝ տեղեկատվական տեխնոլո-



գիտնորի կամ տեխնիկական միջոցների (օր.՝ համակարգիչ, տեսահսկման համակարգ) միջոցով:

Օրինակ՝ ուսումնական հաստատությունում տեղադրված տեսահսկման համակարգի միջոցով տեսահսկման դաշտում հայտնված մարդկանց տեսապատկերներ պարունակող տեսաձայնագրությունների ամրագրումն ու պահպանումն անձնական տվյալների ավտոմատացված մշակում է, քանի որ տեսահսկման տեխնիկական միջոցի օգնությամբ ամրագրվում, պահպանվում և անհրաժեշտության դեպքում օգտագործվում են մարդու թվային պատկերները:

Ոչ ավտոմատացված (մեխանիկական) եղանակով անձնական տվյալների մշակումը նշանակում է, որ անձնական տվյալները մշակվում են ձեռքով՝ առանց տեխնիկական սարքերի գործադրմամբ, թղթային կրիչի վրա: Օրինակ՝ ուսումնական հաստատությունը վարում է իր աշխատակիցների, սովորողների թղթային անձնական գործերը: Մասնավորապես, անձնական գործում հավաքում և պահպանում է տվյալ անձին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:



### **Կարևոր է իմանալ.**

- ◆ *Անձնական տվյալների հետ կատարվող ցանկացած գործողություն համարվում է մշակում:*
- ◆ *Անձնական տվյալները մշակվում են ավտոմատացված և ոչ ավտոմատացված եղանակով:*
- ◆ *Անձնական տվյալներն այլ անձանց փոխանցելը, տրամադրելը, ծանոթացնելը կամ որևէ կերպ մատչելի դարձնելը, այդ թվում՝ սոցիալական ցանցերով կամ լրատվամիջոցներով հրատարակելը, նույնպես համարվում է անձնական տվյալների մշակում:*



## 1.4. Անձնական տվյալներ մշակող

Անձնական տվյալներ մշակող է համարվում այն սուբյեկտը, որը **կազմակերպում** և/կամ **իրականացնում է անձնական տվյալների մշակումը**: Որպես անձնական տվյալներ մշակող կարող են հանդես գալ՝

- պետական կառավարման մարմինները,
- տեղական ինքնակառավարման մարմինները,
- պետական կամ համայնքային հիմնարկները,
- պետական կամ համայնքային կազմակերպությունները,
- իրավաբանական անձինք,
- ֆիզիկական անձինք:

Փաստորեն, տվյալներ մշակող կարող են հանդիսանալ բոլորը՝ և՛ պետական կառավարման մարմինները (օր.՝ կառավարություններ, նախարարությունները և այլն), և՛ տեղական ինքնակառավարման մարմինները (քաղաքապետարան, համայնքապետարան), և՛ իրավաբանական անձինք (մասնավոր կազմակերպությունները, ինչպիսիք են՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները (ՍՊԸ), փակ բաժնետիրական ընկերությունները (ՓԲԸ), բաց բաժնետիրական ընկերությունները (ԲԲԸ), հասարակական ընկերությունները (ՀԿ), հիմնադրամները), և՛ ցանկացած մարդ, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերը:

Անձնական տվյալներ մշակող է համարվում ոչ միայն անձնական տվյալների մշակումն անմիջականորեն իրականացնողը, այլև անձնական տվյալների մշակումը կազմակերպողը:

**Անձնական տվյալների մշակման կազմակերպումը** նշանակում է, որ տվյալներ մշակողը մշակումն իրականացնում է ոչ թե անձամբ, այլ մեկ այլ սուբյեկտի միջոցով միջնորդավորված, սակայն մշակողի հանձնարարությամբ և նրա կողմից սահմանված նպատակներով և պայմաններով:



Նշվածը առավել հեշտ հասկանալու համար ստորև ներկայացված են անձնական տվյալների մշակման և կազմակերպման մեկական օրինակներ:

Անվտանգության ապահովման նպատակով ուսումնական հաստատությունում տեղադրվում է տեսահսկման համակարգ, և տեսահսկման ողջ գործընթացն իրականացնում են ուսումնական հաստատության իրավասու աշխատակիցները (օրինակ՝ անվտանգության աշխատակիցը): Տեսահսկման արդյունքում ամրագրված մարդու տեսապատկերներ պարունակող տեսագրությունների ամրագրումը, պահպանումը, ան-



հրաժեշտության դեպքում ուսումնասիրությունը (օր.՝ ուսումնական հաստատությունում գույք է վնասվել և վնասողին պարգելու նպատակով համապատասխան տեսանյութն ուսումնասիրվում է) իրականացնում են ուսումնական հաս-



տատության իրավասու աշխատակիցները: Նկարագրված դեպքում անձնական տվյալների մշակումը՝ մարդկանց տեսապատկերների հետ գործողությունների կատարումը, ի դեմս իր իրավասու աշխատակիցների, անմիջապես իրականացնում է ուսումնական հաստատությունը:

Մեկ այլ դեպքում, ուսումնական հաստատությունն իր մոտ անցկացվող աշակերտների և ուսուցիչների մասնակցությամբ իրականացվող միջոցառման տեսաձայնագրումը ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա պատվիրակում է տարաբնույթ միջոցառումների տեսանկարահանում իրականացնող մասնագիտացված ընկերությանը, որպեսզի վերջինիս կողմից իրականացված տեսաձայնագրությունը անցկացված միջոցառման մասին իրազեկելու նպատակով հրապարակի սոցիալական ցանցի իր էջում կամ ինտերնետային կայքում:

Այս օրինակում թեև միջոցառման մասնակիցների տեսանկարահանումն իրականացնում է այլ կազմակերպությունը, սակայն այդ տեսանկարահանումը կազմակերպել է ուսումնական հաստատությունը, իրականացվում է նրա պատվերով, նրա անունից և նրա կողմից սահմանված նպատակներով: Հետևաբար, այս օրինակում անձնական տվյալներ մշակողը հանդիսանում է ուսումնական հաստատությունը:

- ◆ *Անձնական տվյալներ մշակողին ճիշտ պարզելու համար պետք է հարց տալ՝ ո՞վ է սահմանում անձնական տվյալների մշակման նպատակը և պայմանները, ո՞ւմ համար են մշակվում անձնական տվյալները և ո՞վ է որոշում, թե ինչ անձնական տվյալներ և ինչպես պետք է մշակվեն. նման որոշումներ կայացնողն էլ հենց կոնկրետ դեպքում կհամարվի անձնական տվյալներ մշակող, իսկ մշակողի անունից և մշակողի հանձնարարությամբ անձնական տվյալների ան-*



միջսական մշակում իրականացնողը կհամարվի տվյալներ մշակողի լիազորված անձ<sup>3</sup>:



### Կարևոր է իմանալ.

Ուսումնական հաստատության աշխատողների (վարչական անձնակազմ և ուսուցիչներ) կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման շրջանակներում անձնական տվյալներ մշակելիս որպես անձնական տվյալներ մշակող **հանդես են գալիս ոչ թե տվյալները մշակող աշխատողները, այլ ուսումնական հաստատությունը**, քանի որ անձնական տվյալների մշակումը բխում է ուսումնական հաստատության կողմից իրենց հանձնարարված աշխատանքային պարտականությունների կատարումից, որոնք կատարում են ուսումնական հաստատության անունից և նրա համար:

<sup>3</sup> «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «**լիազորված անձ**» է համարվում իրավաբանական կամ ֆիզիկական անձը, պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինը, պետական կամ համայնքային հիմնարկը կամ կազմակերպությունը, որին տվյալներ մշակողի կողմից օրենքով սահմանված դեպքերում կամ պայմանագրի հիման վրա պատվիրվել է հավաքել, մուտքագրել, համակարգել կամ այլ կերպ մշակել անձնական տվյալներ:



## 2 ԱՆՃՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԿՉՔՈՒՆՔՆԵՐԸ

Անձնական տվյալների պաշտպանության սկզբունքներն այն հիմնարար կանոններն են, որոնք կիրառելի են անձնական տվյալների մշակման ցանկացած դեպքի նկատմամբ: Դրանք ունեն համընդհանուր բնույթ և ցանկացած անձնական տվյալի մշակման դեպքում մշակողը պարտավոր է պահպանել այդ սկզբունքներով սահմանված պահանջները: Այս սկզբունքների նպատակն է ապահովել տվյալներ մշակողների կողմից անձնական տվյալների բարեխիղճ ու օրինական մշակումը և երաշխավորել մշակման գործընթացում անձնական տվյալների պատշաճ պաշտպանությունը: Անձնական տվյալների մշակման սկզբունքները ոչ թե վերացական գաղափարներ են, այլ տվյալներ մշակողներին հասցեագրված և կոնկրետ պարտականություննախատեսող նորմեր, որոնց խախտումը հանգեցնում է անձնական տվյալների անօրինական մշակման և ըստ այդմ՝ օրենքով նախատեսված պատասխանատվության:

Ինչպես արդեն նշվեց, անձնական տվյալների մշակման սկզբունքներն ունեն համընդհանուր (ունիվերսալ) բնույթ և կիրառելի են նաև ուսումնական հաստատությունների կողմից անձնական տվյալների մշակման նկատմամբ: Մասնավորապես, ուսումնական հաստատություններն անձնական տվյալների մշակումը պետք է իրականացնեն հետևյալ սկզբունքների հիման վրա՝

1. օրինականության սկզբունք,
2. համաչափության սկզբունք,
3. անձնական տվյալներ մշակելու իրավական հիմք,
4. երեխայի լավագույն շահի սկզբունք,



5. թափանցիկության սկզբունք,
6. տվյալների անվտանգության սկզբունք,
3. հավաստիության սկզբունք:

## 2.1. Օրինականության սկզբունք

Օրինականության սկզբունքը սահմանում է երկու հիմնական պահանջ՝

- ✓ անձնական տվյալների մշակումն իրականացվի օրենքի պահանջների պահպանմամբ և
- ✓ անձնական տվյալների մշակումն ունենա **օրինական և որոշակի նպատակ(ներ)**:



Օրենքի պահանջներին համապատասխան անձնական տվյալների մշակումը նշանակում է, որ ուսումնական հաստատությունը պետք է անձնական տվյալների մշակումն իրականացնի անձնական տվյալների մշակման տվյալ դեպքին վերաբերելի օրենքով սահմանված պահանջներին համապատասխան: Մասնավորապես, եթե ուսումնական հաստատությունը մշակում է աշխատողների անձնական տվյալներ, ապա այդ դեպքում «Անձ-



նական տվյալների պաշտպանության մասին» օրենքին զուգահեռ պետք է հաշվի առնի նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի «Աշխատողների անձնական տվյալների պաշտպանությունը» վերտառությամբ 16-րդ գլխի պահանջները: Օրինակ՝ աշխատողի անձնական տվյալները փոխանցելիս ուսումնական հաստատությունը պետք է հաշվի առնի ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134-րդ հոդվածի պահանջները:

Ինչ վերաբերում է օրինականության սկզբունքով անձնական տվյալները մշակելու նպատակներին առաջադրվող պահանջներին, ապա անձնական տվյալները պետք է մշակվեն **օրինական** (օրենքով սահմանված կամ իրավունքին չհակասող, ոչ հանցավոր) և **որոշակի** (կոնկրետ, հստակ ձևակերպված, ոչ ընդհանուր բնույթի) նպատակներով: Նախքան անձնական տվյալների մշակումը (հավաքելը) սկսելը ուսումնական հաստատությունը պետք է հստակ սահմանի, որոշակիացնի (կոնկրետացնի) անձնական տվյալների մշակման նպատակները, որոնք պետք է լինեն օրինական և որոշակի: Օրինակ՝ երեխային դպրոց ընդունելու և նրա կրթությունն ապահովելու նպատակով դպրոցը կարող է մշակել (հավաքել, օգտագործել) երեխայի որոշակի անձնական տվյալներ (անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան տարեթիվ, հասցե և այլն), քանի որ այդ նպատակները օրինական են և որոշակի:

Արգելվում է ոչ իրավաչափ, անորոշ, ընդհանրական կամ անսահմանափակ նպատակներով անձնական տվյալների մշակումը: Նման դեպքերում անձնական տվյալների մշակումը կհամարվի անօրինական և կառաջացնի օրենքով նախատեսված պատասխանատվություն: Օրինակ, եթե ուսումնական հաստատությունը սահմանի, որ անձնական տվյալները կարող է մշակել «օրենքով չարգելված ցանկացած նպատակով», այս ձևակերպու-



մը խնդրահարույց է օրինականության սկզբունքի տեսանկյունից, քանի որ որոշակի չէ, խիստ ընդհանրական է և արդյունքում ստացվում է, որ ուսումնական հաստատությունը կարող է անձնական տվյալները մշակել անսահմանափակ նպատակներով:

Երբեմն որոշակի անձնական տվյալների մշակման նպատակները հատակ սահմանված են օրենքով, և մշակողը պարտավոր է այդ անձնական տվյալների մշակումը իրականացնել միայն օրենքով սահմանված այդ նպատակների սահմաններում: Այսպես, ուսումնական հաստատությունն աշխատողների անձնական տվյալները կարող է մշակել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 132-րդ հոդվածով նախատեսված հետևյալ նպատակներով.

- օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարումն ապահովելը,
- աշխատողների աշխատանքի տեղավորումը,
- աշխատողների ուսուցումը,
- աշխատանքում առաջխաղացումը,
- աշխատողների անձնական անվտանգության ապահովումը,
- կատարվող աշխատանքի քանակը և որակը վերահսկելը,
- գույքի ամբողջականությունն ապահովելը:

Միաժամանակ, օրենքով կամ աշխատողների համաձայնությամբ վերջիններիս անձնական տվյալները կարող են մշակվել նաև այլ օրինական նպատակներով: Օրինակ՝ ուսումնական հաստատությունը կարող է իր ուսուցիչների համաձայնության հիման վրա ուսումնական հաստատության աշխատանքները լուսաբանելու նպատակով համացանցում հրապարակել ուսումնական միջոցառումների տեսանյութերը, որոնցում երևում են այդ աշխատողների տեսապատկերները:



Ուսումնական հաստատությունն աշակերտների անձնական տվյալները նույնպես պետք է մշակի միայն հստակ և օրինական նպատակներով: Որպես այդպիսի նպատակներ կարող են լինել՝

- աշակերտին ուսումնական հաստատություն ընդունելը,
- աշակերտների անվտանգությունն ապահովելը,
- աշակերտների առողջության պահպանումը,
- աշակերտների ֆիզիկական ու մտավոր զարգացման դժվարությունները կանխարգելելը և վերականգնելը,
- աշակերտների խրախուսումը,
- ուսումնական հաստատության ներքին կարգապահական կանոնների պահպանումը և այլն:

Ուսումնական հաստատությունն անձնական տվյալները պետք է մշակի միայն **այն նպատակով, որի համար դրանք հավաքվել են**: Ուսումնական հաստատությունն անձնական տվյալները կարող է մշակել նոր նպատակով միայն այն դեպքում, երբ **տվյալների սուբյեկտը տվել է նոր նպատակով իր անձնական տվյալների մշակման համաձայնություն**, կամ **նոր նպատակով անձնական տվյալների մշակումն ուղղակիորեն նախատեսված լինի օրենքով**:

Եթե ուսումնական հաստատությունը պարզում է, որ իր կողմից մշակվող տվյալներն անհրաժեշտ չեն իր կողմից սահմանված կամ օրենքով նախատեսված օրինական և որոշակի նպատակին հասնելու համար, ապա այդ դեպքում պարտավոր է ոչնչացնել իր կողմից մշակվող անձնական տվյալները:



## 2.2. Համաչափության սկզբունք

Համաչափության սկզբունքի համաձայն՝ անձնական տվյալների մշակումը համարվում է համաչափ, եթե այն՝

- **անհրաժեշտ է հետապնդվող նպատակի իրականացման համար**, այսինքն՝ առանց անձնական տվյալների մշակման հնարավոր չէ հասնել հետապնդվող նպատակին: Օրինակ՝ աշակերտների հաճախելիությունը ստուգելու նպատակին հասնելու համար ուսուցչի կողմից աշակերտի ներկայությունն ստուգելը և մատյանում



դրա վերաբերյալ նշում կատարելը համարվում է անձնական տվյալի մշակում, և առանց դրա հնարավոր չէ հասնել հետապնդվող նպատակին:

- **պիտանի է հետապնդվող նպատակի իրականացման համար**, այսինքն՝ թույլ է տալիս արդյունավետ կերպով ապահովել հետապնդվող նպատակի իրականացումը: Օրինակ՝ գույքի և անձանց անվտանգությունն ապահովելու նպատակով դպրոցի շենքի անմիջապես արտաքին հարակից տարածքի, մուտքի/ելքի, սանդուղքների,



միջանցքների տեսահսկումը հնարավորություն է տալիս արագ և արդյունավետ կերպով պարզել դպրոցի տարածքում հակաօրինական արարք կատարած անձին:

- **չափավոր է հետապնդվող նպատակի իրականացման համար:** Չափավորությունը նշանակում է, որ տվյալ անձնական տվյալների մշակումը հնարավոր առկա միջոցներից առավել չափավորն է հետապնդվող նպատակին հասնելու տեսանկյունից, այսինքն՝ առավել նվազ միջամտողը մարդու անձնական կյանքի նկատմամբ: Օրինակ, եթե ուսումնական հաստատությունը կարող է իր աշխատողների ելումուտը վերահսկել անցակետերում մագնիսական քարտերի միջոցով, ապա չպետք է օգտագործի մարդու դեմքի կամ մատնահետքերի նույնականացման համակարգեր, քանի որ մարդու թվային դիմապատկերը և մատնահետքերը հանդիսանում են կենսաչափական անձնական տվյալներ, որոնք իրենց բնույթով ավելի զգայուն են և այդ տվյալների մշակման հնարավոր խախտումները մարդկանց անձնական կյանքին առավել միջամտող ազդեցություն ունեն:

Համաչափության սկզբունքով նախատեսված անձնական տվյալների մշակման վերը նշված երեք պայմանները (չափանիշները) պետք է առկա լինեն միաժամանակ, իսկ դրանցից որևէ մեկի բացակայության դեպքում անձնական տվյալների մշակումը չի համարվի համաչափ:

Համաչափության սկզբունքը պահանջում է նաև, որ անձնական տվյալների մշակմամբ հետապնդվող նպատակի տեսանկյունից **անձնական տվյալները մշակվեն անհրաժեշտ նվազագույն քանակով և ժամկետով:**

- **Անձնական տվյալներն անհրաժեշտ նվազագույն**



**քանակով մշակելու պահանջը** նշանակում է, որ պետք է մշակվեն միայն այն անձնական տվյալները և այն քանակով, որը անհրաժեշտ է մշակմամբ հետապնդվող նպատակի իրականացման համար: Չպետք է մշակվեն այն տվյալները, առանց որոնց հնարավոր է հասնել հետապնդվող նպատակին:

Իր հերթին **անձնական տվյալներն անհրաժեշտ նվազագույն ժամկետով պահպանելը** նշանակում է, որ անձնական տվյալները պետք է պահպանվեն այն ժամկետով, որն օբյեկտիվորեն անհրաժեշտ է տվյալների մշակման նպատակների իրականացման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով տվյալ անձնական տվյալների պահպանման համար սահմանված է հստակ ժամկետներ: Օրինակ, եթե ուսումնական հաստատությունը որևէ առարկայի ուսուցչի թափուր հաստիքը համալրելու նպատակով ստացել է թեկնածուների անձնական տվյալներ պարունակող փաստաթղթեր, ապա այդ թափուր հաստիքի համալրումից անմիջապես հետո պետք է ոչնչացնի աշխատանքի չընդունված թեկնածուների անձնական տվյալները, քանի որ վերջիններիս տվյալները պահպանելու նպատակը (թափուր հաստիքը համալրելը) արդեն իրականացվել է:



### **Կարևոր է մտապահել.**

*Անձնական տվյալների մշակումը համաչափ է, եթե տվյալների մշակումը հետապնդվող նպատակին հասնելու համար **անհրաժեշտ, պիտանի և չափավոր միջոց** է, ինչպես նաև հետապնդվող նպատակի տեսանկյունից անձնական տվյալները մշակվում են **անհրաժեշտ նվազագույն քանակով և ժամկետով**:*



### 2.3. Թափանցիկության սկզբունք

Թափանցիկության սկզբունքի նպատակն է բացառել անձնական տվյալների գաղտնի մշակումը:

Թափանցիկության սկզբունքը ներառում է մի կողմից ուսումնական հաստատության պարտականությունը՝ տվյալների սուբյեկտին (օր.՝ ուսուցիչներ, աշակերտներ) տեղեկացնելու վերջիններիս անձնական տվյալների մշակման մտադրության և մշակման պայմանների վերաբերյալ, իսկ մյուս կողմից՝ տվյալների սուբյեկտի իրավունքը՝ ցանկացած պահի տվյալներ մշակողից՝ ուսումնական հաստատությունից ստանալու տեղեկություններ իր անձնական տվյալների մշակման վերաբերյալ:

*Հիշեցում. տվյալների սուբյեկտն այն անձն է, որին վերաբերում են մշակվող անձնական տվյալները:*

#### **1) Տվյալների սուբյեկտին իր անձնական տվյալները մշակելու մտադրության և մշակման պայմանների մասին ծանուցելու ուսումնական հաստատության պարտականությունը**

Վերը նշված պարտականությունն ուսումնական հաստատության վրա դրվում է միայն **անձնական տվյալները համաձայնության հիման վրա մշակելու դեպքում**<sup>4</sup>: Այսպես, նախքան անձնական տվյալների մշակումը սկսելը (օրինակ՝ մշակման համաձայնությունը ստանալիս) ուսումնական հաստատությունը պարտավոր է տվյալների սուբյեկտին ծանուցել իր անձնական տվյալների մշակման մտադրության և մշակման պայմանների մասին:

Ընդ որում, ուսումնական հաստատությունը պարտավոր է

<sup>4</sup> Տե՛ս «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածը և 18-րդ հոդվածի 4-րդ մասը:



տվյալների սուբյեկտին (աշխատող, 16 տարին չլրացած անչափահասի դեպքում նրա օրինական ներկայացուցչին) տեղեկացնել սեփական նախաձեռնությամբ՝ անկախ վերջինիս կողմից համապատասխան պահանջ ներկայացնելու հանգամանքից: Ուսումնական հաստատությունը պարտավոր է տվյալների սուբյեկտին տեղեկացնել անձնական տվյալների մշակման նպատակների, մշակման ենթակա անձնական տվյալների և այդ տվյալների հետ կատարվող գործողությունների ցանկի, անձնական տվյալների պաշտպանությանն առնչվող իրավունքների



(տվյալների ուղղում, ոչնչացում պահանջելու իրավունքների) իրացման պայմանների մասին:

- ◆ *Կարևոր է նկատի ունենալ, որ ուսումնական հաստատությունն ազատվում է տվյալների սուբյեկտին տեղեկացնելու պարտականությունից, եթե տվյալների մշակումը նախատեսված է օրենքով կամ մշակման ենթակա են հանրամատչելի անձնական տվյալներ:*



## **2) Տվյալների սուբյեկտի՝ իր մշակվող անձնական տվյալների վերաբերյալ մշակողից տեղեկություններ ստանալու իրավունքը**

Տվյալների սուբյեկտը (ուսուցիչ, աշակերտ կամ նրա օրինական ներկայացուցիչ) իրավունք ունի ցանկացած ժամանակ ուսումնական հաստատությունից ստանալ տեղեկություններ իր անձնական տվյալները մշակելու վերաբերյալ, այդ թվում՝ մշակելու փաստը հաստատելու (թե արդյոք իր տվյալները մշակվում են, թե ոչ), մշակման իրավական հիմքերի և նպատակների, անձնական տվյալները մշակելու եղանակների, ժամկետների, այն սուբյեկտների վերաբերյալ, որոնց տրամադրվել կամ կարող են տրամադրվել իր անձնական տվյալները<sup>5</sup>:

*Պետք է նկատի ունենալ, որ տվյալների սուբյեկտի այս իրավունքը ժամանակային առումով ենթակա չէ սահմանափակման, ինչը նշանակում է, որ տվյալների սուբյեկտը պետք է ողջամիտ հնարավորություններ ունենա տեղեկություններ ստանալու նաև անցյալում կատարված և ներկայում արդեն ավարտված տվյալների մշակման վերաբերյալ:*

Ուսումնական հաստատությունը երեխայի անձնական տվյալները մշակելու վերաբերյալ տեղեկությունները պարտավոր է տրամադրել կամ դրանց հնարավորություն ընձեռել ծանոթանալ գրավոր հարցումը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում<sup>6</sup>: Ուսումնական հաստատության կողմից տվյալների սուբյեկտին

<sup>5</sup> Տվյալների սուբյեկտին տրամադրման ենթակա տեղեկությունները նախատեսված են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենսգրքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով: Ընդ որում, վերոնշյալ իրավադրույթով նախատեսված տեղեկությունների ցանկը սպառիչ չէ, հետևաբար տվյալների սուբյեկտները կարող են պահանջել նաև իրենց անձնական տվյալների մշակման վերաբերյալ այլ տեղեկություններ:

<sup>6</sup> Տե՛ս «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասը:



անձնական տվյալների վերաբերյալ տեղեկությունները պետք է տրամադրվեն **հասանելի ձևով և չպետք է պարունակեն այլ տվյալների սուբյեկտին վերաբերող անձնական տեղեկություններ**: Ընդ որում, տվյալների սուբյեկտը կարող է իր վերաբերյալ տեղեկություններ ստանալու դիմում ներկայացնել ինչպես անձամբ, այնպես էլ իր ներկայացուցչի միջոցով:

Տեղեկությունները տվյալների սուբյեկտին տրամադրվում են **անվճար**: Ուսումնական հաստատությունները տվյալների սուբյեկտներին իրենց վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու համար կարող են վճարներ սահմանել միայն օրենսդրությամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում:

#### **2.4. Անձնական տվյալների մշակման անվտանգության սկզբունքը**

Տվյալների մշակումից բխող ցանկացած բացասական ազդեցություն տվյալների սուբյեկտի նկատմամբ կանխելու նպատակով անվտանգության սկզբունքը տվյալներ մշակողի՝ քննարկվող դեպքում ուսումնական հաստատության նկատմամբ սահմանում է պարտականություն՝ ձեռնարկելու համապատասխան **տեխնիկական և կազմակերպչական միջոցառումներ** իր կողմից մշակվող անձնական տվյալները պատահական կորստից, արտահոսքից կամ ցանկացած ապօրինի միջամտությունից պաշտպանելու համար: Օրինակ՝ ապօրինի միջամտություն է անձնական տվյալներին չթույլատրված հասանելիություն ունենալը և դրանց հետ որևէ գործողություն կատարելը՝ կրկնօրինակելը, փոփոխելը, ոչնչացնելը և այլն:

Ձեռնարկվող անվտանգության միջոցառումները պետք է **համարժեք լինեն մշակվող տվյալներին սպառնացող ռիսկերին**: Համարժեքությունը գնահատելիս պետք է հաշվի առնվեն



մշակվող անձնական տվյալների տեսակները, մշակվող անձնական տվյալների ծավալը, հնարավոր սպառնացող ռիսկերը, դրանց վրա հասնելու հավանականության և բացասական ազդեցության աստիճանը մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների նկատմամբ:



### **Կարևոր է մտապահել.**

- ◆ *Ձեռնարկվող անվտանգության միջոցառումները պետք է համարժեք լինեն անձնական տվյալի զգայունությանը: Որքան զգայուն է անձնական տվյալը, այնքան խիստ պետք է լինի անվտանգության միջոցառումը: Օրինակ՝ մարդու առողջական վիճակի վերաբերյալ տեղեկություններ մշակելիս անվտանգության միջոցառումները պետք է ավելի բարձր լինեն:*
- ◆ *Որքան մեծ է մշակվող անձնական տվյալներին սպառնացող վտանգը և դրանց վրա հասնելու հավանականությունը, այնքան ուժեղ պետք է լինի ձեռնարկվող անվտանգության միջոցառումները:*

➤ **Կազմակերպչական միջոցառումները** վերաբերում են ուսումնական հաստատությունում անձնական տվյալների անվտանգության բարձրացմանն ուղղված ընթացակարգերի և կանոնակարգերի կիրառմանը: Որպես կազմակերպչական միջոցառումներ ուսումնական հաստատությունը պարտավոր է՝

- կանխել մշակվող անձնական տվյալներին մատչելիությունը դրա իրավունքը չունեցող անձանց համար և ապահովել մշակվող անձնական տվյալներին հասանելիություն միայն իր այն աշխատակիցներին, որոնց աշխատանքային կամ ծառայողական պարտականու-



թյուններից է բխում այդ անձնական տվյալների մշակումը (օգտագործումը): Ընդ որում, մշակվող անձնական տվյալներին յուրաքանչյուր աշխատակից պետք է հասանելիություն ունենա իր աշխատանքային պարտականությունների կատարման համար անհրաժեշտ ծավալով,

- սահմանել մշակվող անձնական տվյալներին հասանելիություն ունեցող աշխատակիցների նկատմամբ պարտականություն՝ պահպանելու իրենց հասանելի դարձած անձնական տվյալների գաղտնիությունը ինչպես անձնա-



կան տվյալները մշակելու հետ առնչվող ծառայողական կամ աշխատանքային պարտականությունը կատարելու ընթացքում, այնպես էլ դրա ավարտից հետո,

- ներդնել տվյալների անվտանգության միջոցառումների արդյունավետությունը կանոնավոր կերպով գնահատելու և, ըստ անհրաժեշտության, դրանք վերանայելու ընթացակարգ,
- ապահովել անձնական տվյալներ պարունակող փաս-



տաթղթերի և տեխնիկական միջոցների համար անվտանգ միջավայր (օրինակ՝ անձնական տվյալներ պարունակող փաստաթղթերի և տեխնիկական միջոցների սենյակների մուտքի մոտ տեսահսկման իրականացում, համակարգիչները մուտքանուններով և գաղտնաբառերով ապահովելու և դրանք պարբերաբար թարմացնելու կարգի սահմանում),

- անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ անձնական տվյալների հետ առնչվող աշխատակիցների վերապատրաստում:

➤ **Տեխնիկական միջոցառումները** վերաբերում են այնպիսի տեխնոլոգիաների և տեխնիկական միջոցների կիրառմանը, որոնք ուղղված են կանխելու անձնական տվյալների կորուստը, արտահոսքը կամ դրանց նկատմամբ ապօրինի միջամտությունը: Տեխնիկական միջոցառումների ձեռնարկման օրինակներ են համակարգչային հակավիրուսային ծրագրերի տեղադրումը, անձնական տվյալներ պարունակող տեղեկատվական համակարգեր մուտք գործելու համար բարդ մուտքանունների և գաղտնաբառերի սահմանումը, այդ թվում՝ երկփուլանի նույնականացման համակարգի ներդրումը, անձնական տվյալներ պարունակող թվային ֆայլերի կոդավորումը և այլն:

## 2.5. Հավաստիության սկզբունք

Հավաստիության սկզբունքը<sup>7</sup> պահանջում է, որ ուսումնական հաստատության կողմից մշակվող անձնական տվյալները լինեն ամբողջական, ճշգրիտ, պարզ և հնարավորինս թարմացված:

<sup>7</sup> Տե՛ս «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենսգրքի 6-րդ հոդվածը:



Ուսումնական հաստատությունը կանոնավոր կերպով պետք է ստուգի և անհրաժեշտության դեպքում թարմացնի իր կողմից մշակվող անձնական տվյալները:

Եթե մշակվող անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն կամ հնացած են, ապա ուսումնական հաստատության կողմից դրանք հայտնաբերվելու կամ անձի կողմից (որի անձնական տվյալները մշակվում են) դիմում ստանալուց հետո ուսումնական հաստատությունը պարտավոր է անհապաղ կամ նման հնարավորության բացակայության դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում անհրաժեշտ գործողություններ իրականացնել անձնական տվյալներն ամբողջացնելու, թարմացնելու, ուղղելու, ուղեփակելու կամ ոչնչացնելու ուղղությամբ<sup>8</sup>:

Օրինակ՝ աշակերտի կողմից իր բնակության վայրը փոխելու դեպքում ուսումնական հաստատությունը պետք է գրանցի նոր բնակության վայրի հասցեն (թարմացնում է բնակության հասցեի վերաբերյալ տեղեկությունը) կամ աշակերտի ծննդյան տարեթիվը սխալ գրանցած լինելու դեպքում ուսումնական հաստատությունը ուղղում է այդ տվյալը:

## 2.6. Երեխայի լավագույն շահի սկզբունք

Այս սկզբունքը կիրառելի է միայն երեխաների<sup>9</sup> անձնական տվյալների մշակման նկատմամբ: Այս սկզբունքը սահմանում է, որ երեխայի նկատմամբ իրականացվող ցանկացած գործո-

<sup>8</sup> Տե՛ս «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը:

<sup>9</sup> **Երեխա** է տասնութ տարին չլրացած անձը (18 տարին լրանալու դեպքում անձը դադարում է երեխա համարվելուց և դուրս է գալիս ծնողական խնամքից): Գործունակությունը լրիվ ծավալով ծագում է չափահաս՝ 18 տարեկան դառնալուց հետո: Սակայն **16 տարին լրացած անչափահասը** անձնական տվյալների պաշտպանության իրավունքով սահմանված իր իրավունքները և պարտականությունները կատարում է անձամբ:



դություն պետք է **բխի նրա լավագույն շահերից**: Երեխայի լավագույն շահերի ապահովումը վերաբերում է երեխայի իրավունքների արդյունավետ և ամբողջական պաշտպանությանը, երեխայի զարգացմանը՝ հաշվի առնելով երեխայի մտավոր և ֆիզիկական կարիքները, այդ կարիքների բավարարման համար համապատասխան խնամքի և դաստիարակության հնարավորությունը:

Երեխաները, ի տարբերություն չափահաս անձանց, ունեն զարգացող իրավունակություն, ինչը նշանակում է, որ իրենց ֆիզիկական և մտավոր կարողությունների զարգացմանը զուգընթաց երեխաները կարիք ունեն պաշտպանության, որի եղանակները փոխվում են երեխաների մեծանալուն և ինքնուրույն որոշումներ ընդունելու կարողությունը զարգացնելուն զուգընթաց: Հենց այդ պատճառով էլ երեխայի լավագույն շահի սկզբունքի էությունն է երաշխավորել երեխային իր տարիքին և հասունությանը համապատասխան պաշտպանությամբ և ապահովել նրա Ֆիզիկական և հոգեբանական առողջ զարգացումը, այլ կերպ ասած՝ նպաստել երեխայի անհատականության բնականոն զարգացմանը:

Երեխայի համարժեք պաշտպանության ապահովմանն է ուղղված երեխայի՝ ներկայացուցչություն ունենալու իրավունքը: Երեխան իր իրավունքների ճնշող մեծամասնությունն իրականացնում է օրինական ներկայացուցիչների (ծնող, որդեգրող, խնամակալ, հոգաբարձու) միջոցով: Սակայն օրինական ներկայացուցչի կարգավիճակը բացարձակ ու անվերապահ գերակայություն չունի երեխայի կարգավիճակի նկատմամբ, և օրինական ներկայացուցիչները պարտավոր են հաշվի առնել երեխայի լավագույն շահը, երբ վերջիններս հանդես են գալիս երեխայի անունից: Օրինակ, եթե երեխայի օրինական ներկայա-



ցուցիչը համաձայնություն է տվել ուսումնական հաստատությանը մշակել երեխայի անձնական տվյալները, սակայն այդ տվյալների մշակումը հակասում է երեխայի լավագույն շահերին, սպա անձնական տվյալների մշակումը նույնիսկ երեխայի օրինական ներկայացուցչի համաձայնության առկայության պայմաններում կհամարվի խնդրահարույց:

Ուսումնական հաստությունները երեխայի անձնական տվյալների մշակման նպատակները սահմանելիս պետք է հաշվի



առնեն երեխայի լավագույն շահը և չպետք է նրա անձնական տվյալները մշակեն այնպիսի նպատակներով, որոնք հակասում են երեխայի լավագույն շահին: Միայն երեխայի օրինական ներկայացուցչի համաձայնություն ստանալը բավարար չէ, որպեսզի երեխայի անձնական տվյալներ մշակելը համարվի օրինական, անհրաժեշտ է նաև, որ մշակումը բխի կամ առնվազն չհակասի երեխայի լավագույն շահերին՝ նրա իրավունքներին և օրինական շահերին:

Երեխայի անձնական տվյալների պաշտպանությունն ինքնին բխում է երեխայի լավագույն շահի սկզբունքից, սակայն երբեմն երեխայի լավագույն շահը և նրա անձնական տվյալների պաշտ-



պանությունը կարող են միմյանց հակադրվել: Այս դեպքում նախապատվությունը պետք է տրվի երեխայի լավագույն շահին:

Օրինակ, երբ ուսումնական հաստատությունում երեխայի հետ միջադեպ է պատահում և նրան հրատապ բժշկական օգնություն է անհրաժեշտ, ուսումնական հաստատությունը, ելնելով երեխային ճիշտ և տեղին բժշկական օգնություն ցուցաբերելու անհրաժեշտությունից, իր մոտ առկա երեխայի բժշկական տվյալները փոխանցում է բուժանձնակազմին՝ առանց երեխայի օրինական ներկայացուցիչների համաձայնությունը ստանալու: Տվյալ դեպքում երեխայի լավագույն շահը՝ նրան բժշկական օգնություն ցուցաբերելը, հակասության մեջ է մտնում նրա անձնական տվյալների պաշտպանության իրավունքի հետ (օրինական ներկայացուցիչների համաձայնությունը ստանալը), բայց նախապատվությունը տրվում է երեխայի լավագույն շահին, քանի որ տվյալ դեպքում պաշտպանության առարկա է երեխայի առողջությունը և կյանքը:



#### **Կարևոր է մտապահել.**

*Բոլոր այն դեպքերում, երբ երեխայի լավագույն շահը հակասում է նրա օրինական ներկայացուցչի շահերին, նախապատվությունը պետք է տրվի երեխայի լավագույն շահին:*

*Երբ երեխայի անձնական տվյալների պաշտպանության և լավագույն շահի միջև առաջանում է հակադրություն, նախապատվությունը պետք է տրվի երեխայի լավագույն շահին:*



## 3 ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Անձնական տվյալների մշակման օրինականության համար անհրաժեշտ է, որ անձնական տվյալների մշակման սկզբունքների պահանջների պահպանմանը զուգահեռ մշակումը ունենա իրավական հիմք: Իրավական հիմքի հիման վրա անձնական տվյալներ մշակելու պահանջը համընդհանուր է և կիրառելի է ցանկացած անձնական տվյալի մշակման նկատմամբ: Այս պահանջը նպատակ ունի կանխել անձնական տվյալների անօրինական, կամայական մշակումը և ապահովել մարդու անձնական տվյալների պաշտպանությունը:

Անձնական տվյալների մշակման իրավական հիմքերն են՝

- օրենքը (անձնական տվյալների մշակումն օրենքով ուղղակիորեն նախատեսված լինելը),
- տվյալների սուբյեկտի համաձայնությունը,
- անձնական տվյալի հանրամատչելիությունը<sup>10</sup>:

### 3.1. Անձնական տվյալների մշակումն օրենքով ուղղակիորեն նախատեսված լինելը

Անձնական տվյալների մշակումը կարող է իրականացվել օրենքի հիման վրա, եթե կոնկրետ անձնական տվյալներ մշակելու հնարավորությունը կամ պարտականությունը ուղղակիորեն նախատեսված է օրենքով: **Անձնական տվյալների մշակումն օրենքով ուղղակիորեն նախատեսված լինելը** նշանակում է, որ որոշակի իրավահարաբերությունները կամ որևէ պետական

<sup>10</sup> Տե՛ս «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածը, 9-րդ հոդվածի 5-րդ մասը:



մարմնի գործունեությունը կարգավորող օրենքն ուղղակիորեն նախատեսում է **անձնական տվյալների մշակման բովանդակային պայմանները**: Բովանդակային պայմանների ներքո նկատի է առնվում, որ օրենքը պետք է հստակ սահմանի անձնական տվյալի մշակման կոնկրետ դեպքը, տվյալները մշակող սուբյեկտին (ո՞վ է մշակելու անձնական տվյալները), անձանց շրջանակը, որոնց անձնական տվյալները մշակվում են (ո՞ւմ անձնական տվյալներն են մշակվելու), մշակման ենթակա անձնական տվյալները (ի՞նչ անձնական տվյալներ են մշակվելու), անձնական տվյալների մշակման նպատակները, տվյալների հետ կատարվող գործողությունները և մշակմանը վերաբերող այլ մանրամասներ (մշակման պայմանները):

Մտորև ներկայացված են օրենքի հիման վրա անձնական տվյալներ մշակելու մի քանի օրինակներ.

✓ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 89-րդ հոդվածը անձնական տվյալների մշակումն ուղղակիորեն նախատեսող դրույթ է, քանզի այն հստակ սահմանում է աշխատանքային պայմանագիր կնքելու համար գործատուի (ուղեցույցի համատեքստում ուսումնական հաստատության) կողմից պահանջվող փաստաթղթերը (անձը հաստատող փաստաթուղթ, սոցիալական ապահովության քարտ կամ ՀԾՀ, կրթության կամ անհրաժեշտ որակավորման մասին վկայական, տեղեկանք առողջական վիճակի մասին/սանիտարական գրքույկ), այդ փաստաթղթերի հետ կատարվող գործողությունները (փաստաթղթերը լուսապատճենահանվում և վերադարձվում են աշխատողին, որոշ փաստաթղթեր պահպանվում են գործատուի մոտ):

✓ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենսգրքի 22-րդ հոդվածը սահմանում է, որ սովորողների առողջության պահպանման և ֆիզիկական ու մտավոր զարգացման դժվարությունները կան-



խարզելու, վերականգնելու նպատակով յուրաքանչյուր սովորող տարին առնվազն մեկ անգամ անցնում է բժշկական (պրոֆիլակտիկ) հետազոտություն՝ ուսումնական հաստատության բժշկական սպասարկման ծառայության կողմից: Այսինքն՝ հիշյալ դրույթը հստակ սահմանում է դրանում նշված նպատակներով ուսումնական հաստատության կողմից երեխաների առողջական վիճակի վերաբերյալ անձնական տվյալներ մշակելու հնարավորությունը:

Օրենքի հիման վրա անձնական տվյալների մշակում է համարվում նաև այն դեպքերը, երբ ուսումնական հաստատությունը՝ որպես գործատու, աշխատողի անձնական տվյալները



փոխանցում է պետական մարմիններին, որոնց այդ տվյալներն անհրաժեշտ են օրենքով սահմանված իրենց գործառույթներն իրականացնելու համար:

✓ Օրինակ՝ ՀՀ հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի համաձայն՝ գործատուները մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ հարկային մարմին են ներկայացնում եկամտային հարկի հաշվարկ, որտեղ ներառվում են տվյալ



գործատուից եկամուտներ ստացող ֆիզիկական անձանց եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված և պահված եկամտային հարկի, իսկ սոցիալական վճարներ կատարող ֆիզիկական անձանց մասով՝ նաև հաշվարկված և պահված սոցիալական վճարների վերաբերյալ տեղեկություններ: Այս հոդվածն ուղղակիորեն նախատեսում է ուսումնական հաստատության կողմից հարկային մարմնին աշխատողների անձնական տվյալները փոխանցելու պարտականությունը և ըստ այդմ՝ տվյալ դեպքում անձնական տվյալների փոխանցումը իրականացվում է օրենքի հիման վրա:

Միաժամանակ, անհրաժեշտ է ընդգծել, որ պարտադիր չէ, որ միշտ անձնական տվյալների մշակման բոլոր պայմանները նախատեսված լինեն հենց օրենքով: Օրենքը կարող է նախատեսել նաև **լիազորող նորմ**, որն անձնական տվյալների բովանդակային պայմանների սահմանումը վերապահում է իրավասու մարմինների կողմից ընդունվող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերին (կառավարության որոշում, նախարարի հրաման), որոնցով նույնպես կարող է նախատեսվել անձնական տվյալների մշակում<sup>11</sup>: Օրինակ՝ երեխաներին ուսումնական հաստատություն ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը նախատեսված է ենթաօրենսդրական նորմատիվ ակտով՝ ԿԳՄՍ նախարարի որոշմամբ<sup>12</sup>, որն ընդունվել է ի կատարումն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ, 14-րդ և 17-րդ կետերով նախատեսված պահանջների:

<sup>11</sup> Նման հնարավորության հիմքում ընկած է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածը, որի 1-ին մասի համաձայն՝ «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:

<sup>12</sup> Տե՛ս ԿԳՄՍ նախարարի 2010 թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրամանը:



### 3.2. Տվյալների սուբյեկտի համաձայնությունը

Անձնական տվյալներն օրինական մշակելու հաջորդ իրավական հիմքը տվյալների սուբյեկտի համաձայնությունն է: Ինչպես արդեն նշվել է սույն ուղեցույցի հիմնական հասկացությունների գլխում, տվյալների սուբյեկտն այն անձն է, ում վերաբերում են մշակվող անձնական տվյալները: Անձը, ում անձնական տվյալները նախատեսվում է մշակել, համաձայնությունը կարող է տալ անձամբ կամ ներկայացուցչի միջոցով՝ լիազորագրի հիման վրա:

- ◆ *Յուրաքանչյուր մարդ կարող է համաձայնություն տալ միայն իր անձնական տվյալների մշակմանը, քացառությամբ անգործունակ, սահմանափակ գործունակ կամ մինչև 16 տարեկան անչափահաս անձանց, որոնց անու-*



*նից համաձայնություն են տալիս նրանց օրինական ներկայացուցիչները (խնամակալը, հոգաբարձուն, երեխայի ծնողը կամ որդեգրողը): Օրինակ՝ մի ուսուցիչը չի կարող համաձայնություն տալ դպրոցի կողմից մեկ այլ ուսուցչի*



*անձնական տվյալների մշակմանը, եթե հանդես չի գալիս որպես մյուս ուսուցչի կողմից լիազորված անձ:*

Անձնական տվյալներ մշակելու վերաբերյալ համաձայնությունը սահմանվում է որպես **անձի ազատ տրված, որոշակի, տեղեկացված և միանշանակ կամահայտնություն, որով անձը տալիս է հավանություն՝ իր անձնական տվյալները մշակելու համար**<sup>13</sup>:

Այս սահմանումից հետևում է, որ համաձայնությունն ունի կոնկրետ բովանդակություն (անձնական տվյալները մշակելուն հավանություն տալու վերաբերյալ կամահայտնություն, արտահայտած ցանկություն) և վավերության հստակ սահմանված չափանիշներ (ազատ տրված, որոշակի, տեղեկացված և միանշանակ), որոնք նպատակ ունեն ապահովել մարդու կողմից իր անձնական տվյալների մշակմանն իրական (իրապես) հավանություն տալը:

Այժմ ստորև քննարկենք համաձայնության հասկացության բոլոր բովանդակային տարրերը:

➤ **«Անձնական տվյալները մշակելուն հավանություն տալու վերաբերյալ ցանկացած կամահայտնություն»**

Կամահայտնությունը մարդու իրական ցանկության արտա-

<sup>13</sup> Համաձայնության վավերության այս պայմանները միջազգայնորեն ճանաչված լավագույն չափանիշներ են և սահմանված են «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան փոփոխող արձանագրության/Արդիականացված 108 կոնվենցիայի (Modernised Convention 108) 5-րդ հոդվածով, ԵՄ տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգի/GDPR 4-րդ հոդվածով, այդ չափանիշների մեկնաբանությունները տրված են ԵՄ եվրոպական տվյալների պաշտպանության խորհրդի/EDPB 2024 թ. ապրիլի 17-ին ընդունված 08/2024 կարծիքով (Opinion 08/2024 on Valid Consent in the Context of Consent or Pay Models Implemented by Large Online Platforms), ինչպես ամրագրվել են ՀՀ վճարեկ դատարանի ԵԴ/25649/02/20 գործով որոշումով:



հայտնությունն է իր անձնական տվյալները մշակելու վերաբերյալ: Այդ կամահայտնությունը կարող է արտահայտվել գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով, բանավոր՝ այնպիսի հավաստի գործողությունների միջոցով, որոնք ակնհայտորեն վկայում են մարդու իր անձնական տվյալները մշակելու ցանկության վերաբերյալ: Օրինակ՝ անձնական տվյալները մշակելու ցանկությունը վկայող գործողություն է, երբ մարդն անձամբ ներկայացնում է մշակման համար անհրաժեշտ անձնական տվյալներ պարունակող փաստաթղթերը:

*Լռությունը, անգործությունը որևէ կերպ չեն կարող դիտարկվել որպես անձնական տվյալների մշակմանը համաձայնություն տալ:*

Որպեսզի համաձայնությունը լինի անձնական տվյալների մշակման վավեր իրավական հիմք, այն պետք է բավարարի հետևյալ 4 չափանիշները.

➤ **Համաձայնությունը պետք է լինի «ազատ տրված»**

«Ազատ տրված» լինելու չափանիշը ենթադրում է, որ մարդը իր անձնական տվյալները մշակելու վերաբերյալ համաձայնությունը տվել է իր իրական ընտրությամբ (ազատ, կամավոր որոշմամբ)՝ առանց խաբեության, սպառնալիքի, հարկադրանքի կամ համաձայնություն չտալու դեպքում իր համար բացասական հետևանքի: Եթե մարդը չունի համաձայնություն տալու կամ չտալու ընտրության իրական ազատություն կամ ի վիճակի չէ մերժել իր անձնական տվյալների մշակումը առանց իր համար բացասական հետևանքների, ապա համաձայնությունը չի համարվում ազատ տրված:

- ◆ *Կարևոր է նաև իմանալ, որ համաձայնության ազատ տրված լինելու չափանիշը ընդգրկում է նաև մարդու կողմից իր հայեցողությամբ ցանկացած պահի իր անձնական տվյալները մշակելու վերաբերյալ համաձայնությունը հետ*



*կանչելու հնարավորությունը՝ առանց իր համար բացասական հետևանքների և ազդեցությունների:*

➤ **Համաձայնությունը պետք է լինի «որոշակի»**

Որոշակի նշանակում է, որ համաձայնությունը տրվում է հստակ նպատակներով կոնկրետ անձնական տվյալների մշակման համար: Այսինքն՝ համաձայնությունից պետք է հստակ լինի և՛ մշակման ենթակա անձնական տվյալների ցանկը, և՛ դրանց մշակման նպատակների շրջանակը: Համաձայնությունը, որը տրվել է ընդհանրական նպատակներով և առանց մշակման ենթակա անձնական տվյալների ցանկի սահմանման անձնական տվյալներ մշակելու վերաբերյալ, որոշակի չէ և չի համարվում վավեր համաձայնություն:

Օրինակ, եթե դպրոցը ստանում է աշակերտի օրինական ներկայացուցչից համաձայնություն՝ դպրոցի գործունեությունն ապահովելու նպատակով աշակերտի անձնական տվյալների մշակման վերաբերյալ՝ առանց սահմանելու մշակման ենթակա անձնական տվյալների ցանկը, այդ համաձայնությունը վավեր չէ, քանի որ ուսումնական հաստատության գործունեության ապահովումը ընդհանրական և ոչ հստակ նպատակ է, իսկ մշակման ենթակա անձնական տվյալների ցանկը հստակեցված չէ, որից հետևում է, որ դպրոցը կարող է իր գործունեության իրականացման համար մշակել աշակերտի ցանկացած անձնական տվյալ, ինչը խնդրահարույց է օրինականության սկզբունքի տեսանկյունից:

➤ **Համաձայնությունը պետք է լինի «տեղեկացված»**

Նախքան իր անձնական տվյալների մշակմանը համաձայնություն տալու վերաբերյալ որոշում կայացնելը անձը պետք է բավարար տեղեկություններ ունենա իր անձնական տվյալների



մշակման հանգամանքների վերաբերյալ: Տեղեկացված համաձայնությունը նշանակում է, որ անձը պետք է տվյալներ մշակողի կողմից պարտադիր կարգով ծանուցվի<sup>14</sup> իր անձնական տվյալները մշակելու վերաբերյալ, և ըստ այդմ՝ անձի համաձայնությունը պետք է հիմնված լինի անձնական տվյալների մշակման հանգամանքները և հետևանքները գիտակցելու ու հասկանալու, անձնական տվյալների մշակման (մշակվող տվյալ-



ների ցանկի, մշակման նպատակի, այլ անձանց հնարավոր փոխանցման, տվյալների սուբյեկտի իրավունքների և այլնի) վերաբերյալ ճշգրիտ և լիարժեք տեղեկությունների վրա: Անձնական տվյալների մշակման վերաբերյալ ծանուցումը պետք է ձևակերպված լինի պարզ և հասկանալի ձևով:

### ➤ **Համաձայնությունը պետք է լինի «միանշանակ»**

Համաձայնության միանշանակ լինելու չափանիշը նշանակում է, որ չպետք է որևէ կասկած մնա, որ տվյալների սուբյեկտը համաձայնություն է տվել իր անձնական տվյալների մշակմանը:

<sup>14</sup> «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածը սահմանում է ծանուցման մեջ ներառվող անձնական տվյալների մշակման վերաբերյալ տեղեկությունների ցանկը:



Այլ կերպ ասած՝ տվյալների սուբյեկտի կամահայտնությունը, որով նա տալիս է իր հավանությունը անձնական տվյալների մշակման վերաբերյալ, պետք է միանշանակորեն վկայի նման մտադրության վերաբերյալ, իսկ եթե կա տվյալների սուբյեկտի մտադրության վերաբերյալ ողջամիտ կասկած, ապա համաձայնությունը չի կարող համարվել միանշանակորեն տրված:

- ◆ Կարևոր է հաշվի առնել, որ անձնական տվյալներ մշակելու համաձայնությունը ստանալու փաստը ապացուցելու պարտականությունը կրում է տվյալներ մշակողը՝ ուսումնական հաստատությունը: Հետևաբար, եթե ուսումնական հաստատությունը ստացել է իր աշխատողի կամ աշակերտի օրինական ներկայացուցչի համաձայնությունը բանավոր կարգով, ապա համաձայնության առկայությունը (անձնական տվյալների մշակման օրինականությունը) վիճարկելու դեպքում գրեթե անհնար է լինելու ապացուցել, որ տվյալների սուբյեկտն իրապես համաձայնել է իր տվյալների մշակմանը: Ուստի, անձնական տվյալների մշակման օրինականությունը վիճարկելու դեպքում համաձայնության առկայությունը հիմնավորելու բարդություններից խուսափելու նպատակով նպատակահարմար է տվյալների սուբյեկտի համաձայնությունը ստանալ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով՝ հաստատված տվյալների սուբյեկտի ստորագրությամբ:
- ◆ Կարևոր է իմանալ, որ, պայմանավորված ֆիզիկական և մտավոր զարգացվածության նվազ աստիճանով, մինչև 16 տարեկան անչափահասի անձնական տվյալները մշակելու վերաբերյալ համաձայնություն



Է տալիս նրա օրինական ներկայացուցիչը՝ ծնողը, ինստանսկալը, հոգաբարձուն կամ որդեգրողը: Եթե երեխայի 16 տարին չի լրացել, ապա նրա կողմից իր անձնական տվյալները մշակելու վերաբերյալ տրված համաձայնությունը չի համարվում վավեր: Մինչդեռ, 16 տարին լրացած անչափահասի դեպքում իր անձնական տվյալները մշակելու վերաբերյալ համաձայնություն է տալիս հենց ինքը, այլ ոչ թե օրինական ներկայացուցիչը:



#### **Կարևոր է մտապահել.**

*Եթե անձնական տվյալների մշակումը նախատեսված չէ օրենքով, ապա այն օրինական է, եթե առկա անձնական տվյալների մշակման վերաբերյալ տվյալների սուբյեկտի համաձայնությունը կամ անձնական տվյալները ձեռք են բերվել անձնական տվյալների հանրամատչելի աղբյուրներից:*

### **3.3. Անձնական տվյալների հանրամատչելիությունը**

Եթե անձնական տվյալների մշակումն ուղղակիորեն նախատեսված չէ օրենքով և միաժամանակ առկա չէ տվյալների սուբյեկտի՝ իր անձնական տվյալները մշակելու վերաբերյալ համաձայնություն, տվյալներ մշակողը (ուսումնական հաստատությունը) կարող է անձնական տվյալներ մշակել, եթե դրանք հանրամատչելի են (ձեռք են բերվել անձնական տվյալների հանրամատչելի աղբյուրներից):

Հանրամատչելի են այն անձնական տվյալները, որոնք տվյալների սուբյեկտի համաձայնությամբ կամ իր անձնական տվյալները հանրամատչելի դարձնելուն ուղղված գիտակցված



գործողությունների կատարմամբ մատչելի են դառնում որոշակի կամ անորոշ շրջանակի անձանց համար, ինչպես նաև այն տեղեկությունները, որոնք օրենքով նախատեսված են որպես հանրամատչելի տեղեկություններ:

Այսպիսով, հանրամատչելի են այն անձնական տվյալները, որոնք կա՛մ մարդն ինքն է գիտակցաբար և կամովին սեփական գործողություններով հանրությանը հասանելի դարձնում, կա՛մ իր համաձայնությամբ են դրանք դարձել հրապարակային: Առանց մարդու ցանկության՝ իր անձնական տվյալները կարող են հանրամատչելի դառնալ միայն այն դեպքում, եթե օրենքով այդ տեղեկությունները սահմանված են որպես հանրամատչելի:

- ◆ *Պետք է նշել, որ հաշվի առնելով երեխաներին պաշտպանելու անհրաժեշտությունը, օրենքներով, որպես կանոն, չեն սահմանվում այնպիսի հանրամատչելի տղայություններ, որտեղ բոլորի համար հասանելի ձևով ներկայացված կլինեն երեխաներին նույնականացնող տվյալներ: Հետևաբար, երեխաների անձնական տվյալները սովորաբար հանրամատչելի են դարձնում կա՛մ նրանց տվյալներ վշակողները, կա՛մ էլ երեխայի օրինական ներկայացուցիչները (ծնողներ, խնամակալ, որդեգրող): Հաճախ էլ, առանց գիտակցելու, իրենց տվյալները հանրամատչելի են դարձնում հենց իրենք՝ երեխաները:*

Ստորև ներկայացված են անձնական տվյալները հանրամատչելի դարձնելու վկայակոչված եղանակներից յուրաքանչյուրի վերաբերյալ օրինակներ:

**➤ Օրենքով նախատեսված հանրամատչելի անձնական տվյալներ:**

*Օրինակ՝ օրենսդրությամբ սահմանվում է որոշակի կատեգորի-*



այի պաշտոնատար անձանց կողմից գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն և միաժամանակ սահմանվում է այդ հայտարարագրերում պարունակվող որոշակի տեղեկությունների նկատմամբ հրապարակային (հանրամատչելի) լինելը: Հայտարարագրում պարունակվող պաշտոնատար անձի վերաբերյալ հրապարակային տեղեկությունները համարվում են օրենքով սահմանված հանրամատչելի անձնական տվյալներ:

**➤ Մարդու գիտակցված գործողություններով հանրամատչելի դարձված անձնական տվյալներ:**

Մարդու կողմից իր գիտակցված գործողություններով անձնական տվյալները հանրամատչելի դարձնելու օրինակ է մարդու կողմից սոցիալական ցանցի իր էջերում հանրային բաց հասանելիությանը իր նկարները, իրեն վերաբերող որևէ իրադարձության (բուհ ընդունվելու/ավարտելու, ամուսնանալու, որևէ որակավորում ստանալու) վերաբերյալ տեղեկությունները հրապարակելը:

**➤ Մարդու համաձայնությամբ սահմանված հանրամատչելի անձնական տվյալներ:**

Անձի համաձայնությամբ անձնական տվյալները հանրամատչելի դարձնելու օրինակ է աշխատողի կողմից գործատուին համաձայնություն տալը գործատուի սոցիալական ցանցի պաշտոնական էջում կամ ինտերնետային կայքում իր անունը, ազգանունը, ծննդյան տարեթիվը, նկարը, զբաղեցրած պաշտոնը, կրթության և աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկությունները հանրային բաց հասանելիությամբ տեղադրելը, հրապարակելը:

Առանց անձի համաձայնության և միաժամանակ օրենքով նախատեսված չլինելու պայմաններում ուսումնական հաստա-



տուրթյունը կարող է անձնական տվյալներ մշակել, եթե դրանք հանրամատչելի են: Օրինակ՝ դպրոցի ուսուցիչը իր սոցիալական էջում հանրային բաց հասանելիությամբ հրապարակում է, որ ստացել է միջազգային հեղինակավոր այս կամ այն կառույցի կողմից որակավորման հավաստագիր, որը համարվում է մասնագիտական մեծ ձեռքբերում: Եթե դպրոցը տվյալ ուսուցչի սոցիալական կայքէջում տեղադրված նկարը հիշյալ հրապարակման հետ միասին հրապարակի իր պաշտոնական էջում կամ կայքէջում դպրոցի հեղինակության բարձրացման նպատակով, ապա դպրոցի կողմից այդ ուսուցչի վկայակոչված անձնական տվյալների մշակումը կհամարվի օրինական, քանի որ դպրոցը մշակել է հանրամատչելի անձնական տվյալներ: Նույն օրինակը կիրառելի է նաև աշակերտի նկատմամբ, որը որևէ առարկայի կապակցությամբ անցկացված օլիմպիադայի հաղթող է ճանաչվել:

- ◆ *Հարկ է նշել, որ հանրամատչելի անձնական տվյալներ մշակելու դեպքում ևս ուսումնական հաստատությունը պետք է այդ տվյալների մշակումն իրականացնի անձնական տվյալների մշակման սկզբունքներին համապատասխան, այն է՝ օրինական և որոշակի նպատակով և այդ նպատակի իրականացման տեսանկյունից համաչափ (անհրաժեշտ, պիտանի և չափավոր):*



# 4 ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԿՈՂՄԻՑ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ

## 4.1. Անձնական տվյալների հավաքումը

### ➤ Երեխաների անձնական տվյալների հավաքումը

Ուսումնական հաստատությունները պետք է հավաքեն երեխաների (աշակերտների) միայն այն անձնական տվյալները, որոնք անհրաժեշտ են ուսումնական հաստատության հետապնդած օրինական նպատակներին հասնելու համար: Այս առումով, ուսումնական հաստատությունը նախևառաջ պետք է հստակ սահմանի, թե որն է այն օրինական նպատակը, որի իրագործման համար հավաքվում են անձնական տվյալներ, և այնուհետև որոշի, թե արդյո՞ք խնդրո առարկա տվյալների մշակումը անհրաժեշտ, չափավոր և պիտանի միջոց է այդ նպատակին հասնելու համար:

- ◆ *Արգելվում է աշակերտների կամ նրանց օրինական ներկայացուցիչների վերաբերյալ այնպիսի անձնական տվյալների հավաքումը և պահպանումը, որոնք անհրաժեշտ չեն ուսումնական հաստատության հետապնդած նպատակի համար:*

<sup>15</sup> Ուսումնական հաստատություն՝ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որն իրականացնում է մեկ կամ մի քանի կրթական ծրագիր և ապահովում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունն այդ ծրագրերի պահանջներին համապատասխան: Մույն ուղեցույցում ուսումնական հաստատություն հասկացության տակ նկատի է առնվում հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները (եռաստիճան միջնակարգ հանրակրթական դպրոցներ, արհեստագործական ուսումնարաններ, քոլեջներ և միջին մասնագիտական ուսումնարաններ):



Ուսումնական հաստատությունները կարող են աշակերտների անձնական տվյալները հավաքել համաձայնության հիման վրա (16 տարին չըրացած աշակերտի տվյալները կարող են հավաքվել միայն վերջինիս օրինական ներկայացուցչի համաձայնությամբ) կամ օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում՝ օրենքի կամ օրենքի հիման վրա ընդունված ենթաօրենսդրական իրավական ակտի հիման վրա: Օրենքի հիման վրա անձնական տվյալներ մշակելիս օրենսդրությամբ հստակ սահմանվում են, թե կոնկրետ որ նպատակի իրագործման համար ինչ անձնական տվյալներ կարող է հավաքել ուսումնական հաստատությունը: Օրինակ՝ ԿԳՄՄ նախարարի հրամանով նախատեսված է այն տեղեկությունների սպառիչ ցանկը, որոնք աշակերտի օրինական ներկայացուցիչը պետք է ներկայացնի ուսումնական հաստատություն ընդունելվու համար:



### **Կարևոր է իմանալ.**

*Եթե ուսումնական հաստատությունը ցանկանում է ստանալ աշակերտի վերաբերյալ անձնական տվյալներ ոչ թե վերջինիս օրինական ներկայացուցչից, այլ, օրինակ, որևէ պետական մարմնից, ապա այդպիսի տվյալներ ստանալու համար պետք է նախապես ունենա երեխայի օրինական ներկայացուցչի համաձայնությունը, բացառությամբ, եթե նման տվյալներ հավաքելը թույլատրված է օրենքով կամ հանդիսանում են հանրամատչելի անձնական տվյալներ:*



### ➤ Աշխատողների անձնական տվյալները հավաքելը

Ուսումնական հաստատությունն իր աշխատողների վերաբերյալ բոլոր անձնական տվյալները պետք է ստանա միայն աշխատողներից: Եթե աշխատողի անձնական տվյալները հնարավոր է ստանալ միայն երրորդ անձից, ապա պետք է առկա լինի աշխատողի գրավոր համաձայնությունը<sup>16</sup>: Որպես գործատու՝ ուսումնական հաստատությունը պարտավոր է աշխատողին տեղեկացնել անձնական տվյալների ստացման նպատակի, տվյալների ստացման հնարավոր միջոցների և աղբյուրների, ինչպես նաև ստացման ենթակա տվյալների բնույթի և աշխատողի կողմից դրանց ստացման գրավոր համաձայնություն տալը մերժելու հետևանքների մասին:

Ուսումնական հաստատությունը պետք է հավաքի թափուր պաշտոնի համար դիմող անձի միայն այն անձնական տվյալները, որոնք անհրաժեշտ են նրան աշխատանքի ընդունելու համար, որոնց ցանկը սահմանվում է օրենսդրությամբ<sup>17</sup>:

Աշխատանքի ընդունելիս արգելվում է պահանջել այնպիսի փաստաթղթեր, որոնք նախատեսված չեն օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով: Եթե աշխատողը գործատուին ներկայացնում է աշխատանքային հարաբերությունների համար ոչ անհրաժեշտ անձնական տվյալներ պարունակող փաստաթղթեր, ապա այդպիսի տվյալներ պարունակող փաստաթղթերը պետք է վերադարձվեն աշխատողին կամ ոչնչացվեն:

<sup>16</sup> Տե՛ս ՀՀ աշխատանքային օրենսգրքի 132-րդ հոդվածը:

<sup>17</sup> Տե՛ս Աշխատանքային օրենսգրքի 89-րդ հոդվածը:



## 4.2. Անձնական տվյալների պահպանումը

Անձնական տվյալները պետք է պահպանվեն այն ժամկետով, որն օբյեկտիվորեն անհրաժեշտ է տվյալների մշակմամբ հետապնդվող նպատակների իրականացման համար, եթե օրենքով այդ անձնական տվյալների պահպանման հստակ ժամկետներ սահմանված չեն: Երբ մշակվող տվյալները այլևս անհրաժեշտ չեն դրանց մշակման նպատակների համար, կամ ուսումնական հաս-



տատությունն արդեն հասել է հետապնդվող նպատակների իրականացմանը, կամ այդ նպատակները սպառվել են, սպա ուսումնական հաստատությունը պետք է ոչնչացնի այդ տվյալները, եթե դրանք որոշակի ժամկետով պահպանելու պարտականություն օրենսդրությամբ սահմանված չէ:

Եթե ուսումնական հաստատությունը անձի համաձայնության հիման վրա մշակում է անձնական տվյալներ, որոնց պահպանման ժամկետն օրենսդրությամբ նախատեսված չէ, սպա անձի այդպիսի տվյալների պահպանման ժամկետի մասին տեղե-



կոթողությունները պետք է ծանուցած լինեն տվյալների սուբյեկտին մինչև վերջինիս կողմից տվյալների մշակման համաձայնություն տալը: Օրինակ, եթե ուսումնական հաստատությունը ցանկանում է իր տվյալների բազայում պահպանել թափուր աշխատանքի համար դիմած, սակայն մրցույթը չհաղթահարած անձանց վերաբերյալ տեղեկությունները՝ հետագայում թափուր հաստիք առաջանալու պարագայում վերջիններիս թեկնածությունը դիտարկելու նպատակով, ապա պետք է ստանա թեկնածուի համաձայնությունը այդ նպատակի իրագործման համար անհրաժեշտ ժամկետով վերջինիս տվյալները պահպանելու համար:

- ◆ *Կարևոր է նկատի ունենալ, որ երբեմն անհնար է հստակ ժամանակահատվածով (օրինակ՝ տարիներով, ամիսներով) սահմանել, թե ինչքան են պահպանվելու անձի վերաբերյալ տեղեկությունները: Այդ դեպքում ուսումնական հաստատությունը պետք է նշի այն իրադարձությունը կամ վիստոր, որոնց տեղի ունենալու կամ վրա հասնելու դեպքում անձի վերաբերյալ տեղեկություններն այլևս չեն պահպանվելու: Օրինակ, եթե ուսումնական հաստատության համար իր աշխատողի որոշ տվյալների պահպանման անհրաժեշտությունը վերանում է աշխատանքային հարաբերությունների ավարտով, ապա որպես տվյալների պահպանման ժամկետ պետք է նշվի աշխատանքային հարաբերությունների ավարտը:*

Աշխատանքային պայմանագիրը լուծելուց և աշակերտի՝ ուսումնական հաստատությունում ուսումնառությունն ավարտելուց հետո ուսումնական հաստատությունը պարտավոր է ոչնչացնել աշխատողի և աշակերտի բոլոր այն անձնական տվյալները, որոնց մշակման նպատակները սպառվել են, բացա-



ռությանը այն տվյալների, որոնց պահպանման ժամկետները նախատեսված են օրենքով: Օրինակ՝ օրենսդրությամբ սահմանված են ուսումնական հաստատության աշակերտների անձնական գործերը, աշխատողների հետ կնքված աշխատանքային պայմանագրերը պահպանելու ժամկետներ, որոնց լրանալու դեպքում այդ փաստաթղթերն արխիվացվում են<sup>18</sup>:

### **4.3. Հատուկ կատեգորիայի և կենսաչափական անձնական տվյալների մշակման առանձնահատկությունները**

Անձնական տվյալների շարքում առանձնանում են անձի վերաբերյալ այնպիսի տեղեկություններ, որոնք իրենց բովանդակությամբ կամ բնույթով վերաբերում են անհատի կյանքի առավել զգայուն ոլորտներին և հարցերին կամ իրենցից ներկայացնում են այնպիսի տեղեկություններ, որոնք թույլ են տալիս անշեղորեն նույնականացնել անձին: Այդ իսկ պատճառով օրենսդրությունը նախատեսում է դրանց մշակման առանձնահատկություններ:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենսգիրքն առանձնացնում է այդպիսի տվյալների երկու տեսակ՝

- հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ,
- կենսաչափական անձնական տվյալներ<sup>19</sup>:

<sup>18</sup> Վերոնշյալ հարաբերությունները, ներառյալ՝ արխիվացման ենթակա փաստաթղթերը, մինչև արխիվացնելը դրանք պահպանելու ժամկետները կարգավորվում են «Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 9-ի N 351-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության N 397-Ն որոշմամբ:

<sup>19</sup> Տե՛ս հատուկ կատեգորիայի և կենսաչափական անձնական հասկացությունների սահմանումները, որոնք տրված են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով:



## ➤ Հատուկ կատեգորիայի անձնական տվյալների մշակումը

Հատուկ կատեգորիայի անձնական տվյալները այն տեղեկություններն են, որոնք վերաբերում են *անձի ռասայական, ազգային պատկանելությանը կամ էթնիկ ծագմանը, քաղաքական հայացքներին, կրոնական կամ փիլիսոփայական համոզմունքներին, արհեստակցական միությանն անդամակցությանը, առողջական վիճակին ու սեռական կյանքին*:

- ◆ Հատուկ կատեգորիայի անձնական տվյալներն իրենց բնույթով այնպիսին են, որ կարող են հանգեցնել **անձի նկատմամբ խտրական կամ անհավասար վերաբեր-**



**մունքի** (օրինակ՝ ազգային պատկանելությունը, էթնիկ ծագումը, կրոնական և քաղաքական համոզմունքները), ինչպես նաև բացահայտել այնպիսի տեղեկություններ, որոնք **անձը կարող է ցանկանալ գաղտնի պահել** (օրինակ՝ առողջական վիճակի, հիվանդությունների, սեռական կյանքի մասին տվյալները):

Հաշվի առնելով հատուկ կատեգորիայի անձնական տվյալ-



ների բարձր զգայունությունը մարդու անձնական կյանքի նկատմամբ՝ ուսումնական հաստատությունները կարող են մշակել այդ անձնական տվյալները միայն այն դեպքում, երբ նման տվյալների մշակումը **հետապնդում է օրինական նպատակ**, ինչպես նաև բիում է **երեխայի լավագույն շահերից**, եթե մշակվելու են երեխայի անձնական տվյալները:

Օրինակ՝ ուսումնական հաստատությունները սովորողների ընդունելությունը կազմակերպելիս առաջնահերթությունը (առաջնայնություն) տալիս են հաշմանդամություն ունեցող երեխաներին: Նշված նպատակին հասնելու համար մշակվում են հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ հանդիսացող երեխայի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկություններ: Այս դեպքում հատուկ կատեգորիայի անձնական տվյալների մշակումը հետապնդում է ոչ միայն օրինական նպատակ, այլ նաև բիում է երեխայի լավագույն շահերից, քանի որ դրա արդյունքում ապահովվում է հաշմանդամություն ունեցող երեխայի՝ կրթություն ստանալու սահմանադրական իրավունքի իրականացումը:

- ◆ *Հատուկ կատեգորիայի անձնական տվյալները կարող են մշակվել, եթե **տվյալների սուբյեկտը տվել է իր համաձայնությունը, կամ այդպիսի մշակումը նախատեսված է օրենքով:***

Այսպես, Աշխատանքային օրենսգրքի 261-րդ հոդվածը նախատեսում է դժբախտ դեպքերի պատճառները պարզելու նպատակով ծառայողական քննություն անցկացնելու պարտականություն, որի շրջանակներում ուսումնական հաստատությունը՝ որպես գործատու, օրենքի հիման վրա մշակում է նաև աշխատողի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկություններ:

- ◆ *Որոշ դեպքերում օրենսդրությունն արգելում է հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ մշակելը, քանի որ*



### ***դա կարող է հանգեցնել անձի նկատմամբ խտրական վերաբերմունքի:***

Օրինակ՝ Աշխատանքային օրենսգրքի 132-րդ հոդվածը արգելում է գործատուին՝ ուսումնական հաստատությանը, ձեռք բերել և մշակել աշխատողի քաղաքական, կրոնական և այլ համոզմունքների կամ անձնական կյանքի վերաբերյալ տվյալներ: Ուսումնական հաստատությունն իրավունք չունի նաև ձեռք բերելու և մշակելու իր աշխատողի՝ հասարակական միավորումներում անդամակցության կամ արհեստակցական միություններում նրա գործունեության մասին անձնական տվյալներ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

*Կարևոր է նկատի ունենալ, որ վկայակոչված արգելքը վերաբերում է ինչպես աշխատանքային հարաբերությունների ընթացքում աշխատողի վերաբերյալ որոշումներ ընդունելուն (օրինակ՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելիս, աշխատողին այլ հաստիքի տեղափոխելիս, աշխատողների թվաքանակը կրճատելիս), այնպես էլ անձին աշխատանքի ընդունելիս (օրինակ՝ աշխատանքի ընդունելիս արգելվում է մշակել անձի քաղաքական հայացքների վերաբերյալ տեղեկություններ):*

### **➤ Կենսաչափական անձնական տվյալներ մշակելը**

Կենսաչափական անձնական տվյալները սահմանվում են որպես անձի **Ֆիզիկական, Ֆիզիոլոգիական և կենսաբանական** առանձնահատկությունները բնութագրող այն տեղեկությունները, որոնք **թույլ են տալիս իրականացնել անձի եզակի նույնականացում**<sup>20</sup>:

<sup>20</sup> «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան փոփոխող արձանագրության/Արդիականացված 108 կոնվենցիայի (Modernised Convention 108) 8-րդ հոդված:



Օրինակ՝ ֆիզիկական և ֆիզիոլոգիական առանձնահատկություններն են մարդու դիմապատկերը, մատնահետքը, աչքի ծիածանաթաղանթը և այլն: Վարքագծային առանձնահատկություններն են մարդու ձեռագիրը, ձայնը, քայլվածքը և այլն:

*Կենսաչափական անձնական տվյալներն այն տեղեկություններն են, որոնք հաստուկ են միայն կոնկրետ մարդուն և որոնց միջոցով հնարավոր է ճշգրիտ կերպով նույնականացնել անձին:*

**Հաշվի առնելով կենսաչափական անձնական տվյալների եզակի և հաստատուն բնույթը՝ տվյալներ մշակողները հաճախ**



դրանք մշակում են աշխատավայրում աշխատանքային պարտականությունների կատարումը վերահսկելու, ինչպես նաև գործատուի գույքի պաշտպանությունը և աշխատողների անվտանգությունն ապահովելու նպատակով: Օրինակ՝ ուսումնական հաստատությունում կարող է մատնահետքերի կիրառման համակարգի միջոցով հսկողություն իրականացվել աշխատողների, աշակերտների հաճախելիության նկատմամբ:

Կենսաչափական անձնական տվյալներ պետք է մշակվեն մի-



այն տվյալների սուբյեկտի համաձայնությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, և **եթե օրենքով հետապնդվող նպատակը հնարավոր է իրականացնել միայն այդ կենսաչափական տվյալները մշակելու միջոցով**: Օրինակ՝ ուսումնական հաստատությունում աշխատողների, աշակերտների և այլ անձանց մուտքը և ելքը վերահսկելու նպատակին հասնելու համար ուսումնական հաստատությունը նախ պետք է դիտարկի ոչ կենսաչափական անձնական տվյալներ մշակելու միջոցով նշված նպատակներին հասնելու հնարավորությունը, օրինակ՝ մագնիսական քարտերի օգնությամբ աշխատավայր ելումուտը վերահսկելը, իսկ կենսաչափական անձնական տվյալներ, օրինակ՝ մատնահետքեր, մշակելու միջոցով վերահսկողություն պետք է իրականացնի միայն այն դեպքում, երբ ուսումնական հաստատությունը հիմնավորի, որ առանց կենսաչափական անձնական տվյալների մշակման հնարավոր չէ հասնել հետապնդվող նպատակին:



#### **Կարևոր է իմանալ.**

Ուսումնական հաստատությունը պարտավոր է նախքան կենսաչափական կամ հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ մշակելը Անձնական տվյալների պաշտպանության գործակալությանը ծանուցել այդ անձնական տվյալները մշակելու մտադրության մասին<sup>21</sup>:

<sup>21</sup> Ծանուցման մեջ ներառվող տեղեկությունների ցանկը նախատեսված է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով:



#### 4.4. Անձնական տվյալների փոխանցումը երրորդ անձանց

Երրորդ անձանց անձնական տվյալների փոխանցում է համարվում անձնական տվյալները որոշակի կամ անորոշ շրջանակի այլ անձանց փոխանցելուն կամ դրանց հետ ծանոթացնելուն ուղղված գործողությունը կամ ցանկացած եղանակով՝ թղթային, էլեկտրոնային կամ բանավոր, անձնական տվյալներն այլ անձի մատչելի դարձնելը:

Ուսումնական հաստատության կողմից երեխաների անձնական տվյալները մշակելու դեպքում տվյալներ մշակողը ուսումնական հաստատությունն է, իսկ տվյալների սուբյեկտը՝ երեխան: Այս դեպքում ուսումնական հաստատության անունից և նրա հանձնարարությամբ երեխաների անձնական տվյալներ մշակող աշխատակիցները հանդես չեն գալիս որպես երրորդ անձինք: Օրինակ՝ ուսումնական հաստատության տնօրենի կամ մի ուսուցչի կողմից մեկ այլ ուսուցչին ուսումնական գործընթացի շրջանակներում աշակերտների վերաբերյալ անձնական տվյալներ փոխանցելը չի համարվում անձնական տվյալների փոխանցում երրորդ անձանց, քանի որ աշակերտների անձնական տվյալները մշակում են ուսումնական հաստատության անունից և նրա համար: Բայց, եթե ուսումնական հաստատությունը աշակերտների անձնական տվյալները փոխանցում ԿԳՄՄ նախարարությանը կամ համայնապետարանին, ապա այս դեպքում առկա է երրորդ անձի փոխանցում:

Ուսումնական հաստատության կողմից իր աշխատակիցների անձնական տվյալները մշակելիս ուսումնական հաստատությունը հանդես է գալիս որպես մշակող, իսկ աշխատակիցը՝ որպես տվյալների սուբյեկտ: Եթե ուսումնական հաստատության անունից մի աշխատակիցը ստանում է մեկ այլ աշխատակ-



ցի անձնական տվյալները, ապա այդ դեպքում առկա է ոչ թե անձնական տվյալների փոխանցում երրորդ անձի, այլ մի տվյալների սուբյեկտի կողմից իր անձնական տվյալների փոխանցում մշակողին: Մինչդեռ, եթե ուսումնական հաստատությունը իր աշխատակցի աշխատավարձի վերաբերյալ տեղեկությունները փոխանցի հարկային մարմնին՝ եկամտային հարկի հարկման նպատակով, ապա այս դեպքում ուսումնական հաստատության կողմից անձնական տվյալների փոխանցումը հարկային մարմնին համարվում է փոխանցում երրորդ անձի:



Ուսումնական հաստատությունն իր աշխատակիցների և աշակերտների անձնական տվյալները կարող է երրորդ անձի փոխանցել (երրորդ անձը անձնական տվյալները ստանալու պահից ինքնուրույն անձնական տվյալներ մշակող է) միայն վերջինիս **համաձայնությամբ** (աշխատողի դեպքում գրավոր համաձայնությամբ) **կամ առանց համաձայնության միայն օրենքով նախատեսված դեպքերում**, բացառությամբ այն դեպքերի, երբ **աշխատողի համաձայնությունը հնարավոր չէ ստանալ, իսկ աշխատողի տվյալների փոխանցումը անհրաժեշտ է նրա**



## Կյանքին և առողջությանը սպառնացող վտանգը կանխելու

**համար:** Օրինակ, եթե դպրոցում ուսուցիչը կամ աշակերտը գտնվում է անզիտակից վիճակում և նրան անհրաժեշտ է հրատապ բժշկական օգնություն ցուցաբերել, ապա դպրոցը կարող է ուսուցչի կամ աշակերտի վերաբերյալ իր մոտ առկա անհրաժեշտ բժշկական տվյալները փոխանցել շտապօգնության բուժանձնակազմին:

### 4.5. Անձնական տվյալների հրապարակումը

Ուսումնական հաստատությունները հաճախ իրենց համացանցային կայքերում կամ սոցցանցերի էջերում հրապարակում են ուսուցիչների, աշակերտների անձնական տվյալներ՝ նրանց մասնակցությամբ կազմակերպված միջոցառումների, նրանց հաջողությունների մասին հանրությանն իրազեկելու և այլ նմանատիպ նպատակներով: *Օրինակ՝ N... դպրոցի 8-րդ դասարանի աշակերտ (անուն- ազգանուն) մասնակցել է քիմիա առարկայի միջազգային օլիմպիադային և զբաղեցրել է 1-ին հորիզոնականը, միաժամանակ այդ հրապարակման մեջ տեղադրված է այդ աշակերտի լուսանկարը:*

Անձնական տվյալների հրապարակումը նույնպես համարվում է անձնական տվյալների մշակում, հետևաբար ուսումնական հաստատության կողմից իր աշխատակիցների և աշակերտների անձնական տվյալների հրապարակումը պետք է ունենա պատշաճ իրավական հիմք և օրինական ու որոշակի նպատակ: Ուսումնական հաստատությունները անձնական տվյալները պետք է հրապարակեն հետապնդվող նպատակի տեսանկյունից անհրաժեշտ նվազագույն քանակով:

*Օրինակ՝ աշակերտի հաջողություններով կիսվելիս, որպես կանոն, միայն նրա անուն-ազգանունը և դասարանը հրապարակելը բա-*



վարար է հանրությանը իրազեկելու նպատակին հասնելու համար, սակայն որոշ դեպքերում ուսումնական հաստատությունը կամ երեխան և նրա օրինական ներկայացուցիչները, ցանկանալով երեխային լավ լույսի ներքո առավել անձնավորված հանրաճանաչելի դարձնել, կարող են երեխայի հաջողության մասին հրապարակման մեջ տեղադրել նաև երեխայի լուսանկարը:

#### **4.6. Տեսահսկումը ուսումնական հաստատություններում**

Տեսահսկումը տարածքի, միջոցառման, գործունեության կամ անձի տեսա/ձայնահսկումն է տեխնիկական սարքի միջոցով: Տեսահսկմամբ ամրագրված տեսագրության (տեսաձայնագրության) մեջ պարունակվող մարդու պատկերները համարվում են անձնական տվյալներ, եթե՝

- ✓ տեսագրության մեջ երևացող անձի դեմքը նույնականացվելի է (ուղղակի նույնականացում), կամ

- ✓ անձի դեմքը տեսանելի չէ և հնարավոր չէ նույնականացնել անձի դիմային առանձնահատկությունները, բայց տեսանկարահանված անձի ֆիզիկական կամ վարքագծային առանձնահատկությունները, համեմատելով այլ տվյալի հետ (օրինակ՝ կազմվածք, քայլվածք, հագուստ), հնարավոր է նույնականացնել անձին (անուղղակի նույնականացում):

- ◆ *Մարդու տեսապատկերը, որը թույլ է տալիս ուղղակիորեն կամ անուղղակիորեն նույնականացնել նրան, անձնական տվյալ է, իսկ տեսահսկման համակարգի (տեսանկարահանող, տեսաձայնագրող տեխնիկական միջոցներով)՝ մարդկանց տեսանկարահանումը կամ տեսաձայնագրումը անձնական տվյալների մշակում է:*



Մարդկանց տեսահսկումը, որպես անձնական տվյալների մշակում, պետք է իրականացվի անձնական տվյալների պաշտպանության օրինականության և համաչափության սկզբունքներին համապատասխան: Մասնավորապես, մարդկանց տեսահսկումը պետք է՝

- իրականացվի օրինական և որոշակի (հստակ) նպատակով և
- հետապնդվող նպատակին հասնելու համար լինի պիտանի, անհրաժեշտ և չափավոր միջոց:



Վկայակոչված պահանջների պահպանումն ապահովելու նպատակով նախքան տեսահսկման համակարգերի տեղադրումը ուսումնական հաստատությունը պետք է իրականացնի հնարավոր վտանգների ճշգրիտ և մանրակրկիտ ուսումնասիրություն՝ հաշվի առնելով տարածքում նախկինում տեղի ունեցած միջադեպերը: Պայմանավորված հնարավոր վտանգների տեսակով և դրանց վրա հասնելու հավանականության աստիճանով՝



ուսումնական հաստատությունը պետք է գնահատի տեսահսկում իրականացնելու անհրաժեշտությունը և սահմանի դրա իրականացման օրինական և որոշակի նպատակները, տեսահսկման ազդեցությունը մարդու անձնական կյանքի նկատմամբ, այլ միջոցներով հասնելու հնարավորությունները:

- ◆ *Ուսումնական հաստատությունում տեսահսկում կարող է իրականացվել, եթե այլ արդյունավետ միջոցներով (անձնական կյանք նվազ ներխուժող) հնարավոր չէ հասնել հետապնդվող նպատակին:*

Ուսումնական հաստատություններում տեսահսկում, որպես կանոն, կարող է իրականացվել **անձանց և գույքի պաշտպանության, ինչպես նաև անչափահասներին վնասակար ազդեցություններից** (կանխելու աշակերտների միջև և նրանց հանդեպ բռնությունը, գողությունները, պատերի և դռների, հաստատության գույքի վնասումը և այլն) պաշտպանելու նպատակով: Տեսահսկում կարող է իրականացվել նաև ուսումնական հաստատությունների շենքերի արտաքին կողմում՝ **դրա շրջակայքում անվտանգությունն ուժեղացնելու** (կանխելու բռնությունները, գողությունները, կողմնակի անձանց մուտքը) նպատակով:

- ◆ *Արգելվում է տեսահսկում իրականացնել կոնկրետ անձին կամ անձանց որոշակի խմբին (կոնկրետ ուսուցչին կամ ուսուցիչներին) հատուկ վերահսկելու նպատակով:*

Ուսումնական հաստատությունում տեսահսկման իրականացումը պետք է հետապնդվող նպատակի տեսանկյունից լինի **համաչափ՝ անհրաժեշտ, տեղին և չափավոր**: Համաչափությունը նշանակում է, որ պետք է լինի արդար հավասարակշռություն տեսահսկմամբ հետապնդվող նպատակի և տեսաձայնագրվող անձի հիմնարար իրավունքների և ազատու-



թյունների միջև<sup>22</sup>: Ուսումնական հաստատությունը պետք է հավասարակշռություն ապահովի հետապնդվող նպատակի և նկարահանվող անձի իրավունքների պաշտպանության միջև, որը հնարավոր է ապահովել համաչափության վերը նշված պահանջների պահպանմամբ:

➤ **Անհրաժեշտ** նշանակում է, որ առանց տեսահսկման իրականացման հնարավոր չէ հասնել հետապնդվող նպատակներին (օրինակ՝ կանխելու աշակերտների կողմից գույքի վնասումը):

➤ **Պիտանի** նշանակում է, որ ի տարբերություն այլ միջոցների՝ տեսահսկումը պետք է հնարավորություն տա արդյունավետորեն հասնել հետապնդվող նպատակների իրականացմանը (օրինակ՝ հնարավորություն է տալիս ցանկացած օր, ցանկացած պահի գույք վնասելը կամ գողանալու դեպքը պարզել և հայտնաբերել նման արարք կատարած անձին): Մինչդեռ, եթե տեսահսկման տեխնիկական միջոցները տեխնիկապես թույլ չեն տալիս արձանագրել հակաօրինական արարքը կամ նույնականացնել նման արարքը կատարողին, ապա պիտանի միջոց չեն հետապնդվող նպատակին հասնելու համար:

➤ **Չափավոր** նշանակում է տվյալների մշակման հետապնդվող նպատակին հասնելու միջոցներից տեսահսկումը պետք է լինի մարդու իրավունքներին և ազատություններին առավել նվազ միջամտող միջոցը, այսինքն՝ տեսաձայնագրումը պետք է լինի տվյալների մշակման բոլոր հնարավոր միջոցների (եղանակների) շարքում առավել նվազ միջամտողը: Միջամտության աստիճանը պայմանավորված է մշակվող տվյալների քանակով (ծավալով), տեսակով, բովանդակությամբ և տվյալների մշակման մեթոդներով և նպատակներով: Օրինակ՝ տեսահսկում չի

<sup>22</sup> «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիայի փոփոխող արձանագրության/ 108+ կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մաս:



կարող իրականացվել աշակերտների ներկայությունը դպրոցում ստուգելու նպատակով, քանի որ առավել նվազ միջոցներով հնարավոր է հասնել այդ նպատակին (մագնիսական քարտերով դպրոց մուտք գործելը վերահսկելու, ուսուցչի կողմից մատչանում ներկայության կամ բացակայության վերաբերյալ նշում կատարելու օգնությամբ):

Տեսահսկման համաչափությունը վերաբերում է նաև տեղադրվող տեսախցիկների քանակին, տեղադրման վայրին, ուղղվածությանը, հնարավորություններին (միայն տեսանկարահանո՞ւմ է, թե՞ նաև ձայնագրում), տեսահսկման իրականացման ժամերին և տեսահսկման ենթակա անձանց կողմից իրականացվող աշխատանքի բնույթին:

Ուսումնական հաստատությունը պետք է ունենա կանոնակարգ (ընթացակարգ), որը հստակ կսահմանի տեսահսկման համակարգի օգտագործման պայմանները և նպատակները, տեսագրությունները դիտելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, ովքեր իրավունք ունեն դիտել տեսագրությունները, տեսագրությունների պահպանման առավելագույն ժամկետը և տեսահսկվող անձանց, այդ թվում՝ երեխաների իրենց անձնական տվյալներին ծանոթանալու իրավունքի իրականացման պայմանները:

Ուսումնական հաստատություններում տեսահսկում իրականացնելիս աշակերտները, նրանց օրինական ներկայացուցիչները և հաստատության անձնակազմը պետք է տեղեկացվեն տեսահսկման համակարգի գոյության, տեսահսկողության իրականացման նպատակների և դրա պատասխանատուների մասին: Միաժամանակ, ուսումնական հաստատությունների բոլոր տեսահսկվող տարածքների տեսանելի հատվածներում պետք է տեղադրվեն նախազգուշացման վահանակներ՝ տեսախցիկների



նկարահանման դաշտ մտնող բոլոր անձանց տեղեկացնելու համար տեսահսկման մասին:

Տեսանյութերը կարող են հասանելի լինել միայն այն անձանց, որոնք պատասխանատու են հաստատության անվտանգության ապահովման համար, որոնց աշխատանքային կամ ծառայողական պարտականություններից է բխում տեսահսկման համակարգին և տեսագրություններին հասու լինելը: Օրինակ՝ տեսագրություններին կարող են հասանելիություն ունենալ դպրոցի անվտանգության համար պատասխանատու անձինք, տնօրենը: Այդ անձինք պետք է պատշաճ մակարդակով տիրապետեն տեսահսկման իրականացման վերաբերյալ իրավական կանոններին:

Տեսահսկմամբ ամրագրված անձնական տվյալներ պարունակող տեսանյութերը պետք է պահպանվեն խիստ որոշակի ժամկետով, որը ոչ մի դեպքում չպետք է գերազանցի 30 օրը: Վերոնշյալ ժամկետից բացառություն թույլատրվում է, եթե տեղի են ունեցել խախտումներ, միջադեպեր (դժբախտ պատահարներ), հանցագործության դեպքեր (գողություն, գույքի վնասում, անձի առողջությանը պատճառված վնաս) և այլ հակաօրինական արարքներ, և այդ տեսագրությունները անհրաժեշտ են տեղի ունեցած խախտումները, միջադեպերը, հակաօրինական արարքները քննելու, այդ թվում՝ իրավապահ մարմինների կողմից գործի նախաքննություն իրականացնելու համար, և հետագայում որպես ապացույց օգտագործվելու են դատարանում:



### **Կարևոր է իմանալ.**

*Արգելվում է տեսահսկում իրականացնել հանդերձարաններում, գուգարաններում, հանգստի սենյակներում և ուսումնական հաստատության բժշկի կաբինետում:*



# 5

## ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻՆ ԾԱՆՈԹԱՆԱԼՈՒ, ԴՐԱՆՔ ՈՒՂՂԵԼՈՒ ԵՎ ՈՉՆՉԱՑՆԵԼՈՒ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Տվյալների սուբյեկտը (ուսուցիչներ, աշակերտներ) ունի մի շարք իրավունքներ, որոնք երաշխավորում են նրա անձնական տվյալների պաշտպանությունը:

### 5.1. Անձնական տվյալների վերաբերյալ տեղեկություններ ստանալու իրավունքը

Տվյալների սուբյեկտն իրավունք ունի ստանալ ամբողջական տեղեկություն իր անձնական տվյալների և դրանց մշակման պայմանների վերաբերյալ: Մասնավորապես, ուսումնական հաստատությունը պետք է տեղեկություններ տրամադրի մշակվող անձնական տվյալների շրջանակի, տվյալները մշակելու հիմքերի և նպատակների, տվյալների հետ կատարվող գործողությունների, ինչպես նաև այն անձանց շրջանակի մասին, որոնց կարող են փոխանցվել անձնական տվյալները:

Ուսումնական հաստատությունը տվյալների սուբյեկտի անձնական տվյալները մշակելու վերաբերյալ տեղեկությունները պարտավոր է տրամադրել կամ հնարավորություն ընձեռել ծանոթանալու դրանց գրավոր հարցումը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում: Աշխատողին իր տվյալների վերաբերյալ տեղեկությունները պետք է տրամադրվեն անվճար:



## 5.2 Անձնական տվյալները ուղղելու և ջնջելու աշխատողի իրավունքը

Տվյալների սուբյեկտն իրավունք ունի ուսումնական հաստատությունից պահանջել ոչնչացնել (ջնջել) կամ ուղղել հնացած, ոչ ամբողջական, ոչ ճշգրիտ, անօրինական ճանապարհով ձեռք բերված կամ մշակման նպատակներին ոչ անհրաժեշտ անձնական տվյալները: Եթե ուսումնական հաստատությունը խախտել է վերոնշյալ պայմանները, ապա վերջինս պարտավոր է 3 աշխատանքային օրվա ընթացքում ուսուցչի կամ երեխայի կամ նրա ծնողի պահանջով անհրաժեշտ գործողություններ իրականաց-



նել դրանք ամբողջացնելու, թարմացնելու, ուղղելու կամ ոչնչացնելու ուղղությամբ: Եթե ուսումնական հաստատությունը մերժում է նշված գործողություններ կատարելու վերաբերյալ դիմումը, ապա պետք է դիմումը ստանալու օրվանից հինգ օրվա ընթացքում դիմումատուին տրամադրի պատճառաբանված գրավոր որոշում:

Ուսումնական հաստատությունը ուղղում է անձնական



տվյալները, եթե մշակվող տվյալներում առկա են տառապիսալներ, թվաբանական սխալներ կամ այլ վրիպակներ, ինչպես նաև, երբ տվյալները թարմացված չեն (օրինակ, երբ աշխատողը փոխել է իր բնակության հասցեն կամ հեռախոսահամարը):

Ուսումնական հաստատությունը ջնջում կամ ոչնչացնում է մշակվող անձնական տվյալները, եթե դրանք ձեռք են բերվել անօրինական ճանապարհով (իրավական հիմքը բացակայում է) կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակներին հասնելու համար: Տվյալների սուբյեկտն իրավունք ունի պահանջել ուսումնական հաստատությունից իր անձնական տվյալները սխալ կամ ոչ լիարժեք փոխանցած բոլոր անձանց տեղեկացնել հանված տեղեկությունների, ուղղումների և լրացումների մասին:

Ուսումնական հաստատությունը պետք է ընդունի տվյալների սուբյեկտների կողմից իրենց անձնական տվյալների ծանոթանալու, դրանք ստանալու, դրանց ուղղում, ամբողջացում կամ ոչնչացում պահանջելու իրավունքների իրականացման վերաբերյալ ընթացակարգ (կանոնակարգ):



## **6 ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

Ուսումնական հաստատություններում անձնական տվյալների պաշտպանության համար կարևորագույն երաշխիքներ են հանդիսանում անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի կողմից անձնական տվյալներ մշակելու օրինականության նկատմամբ հսկողության իրականացումը, ինչպես նաև վերջինիս կողմից անձնական տվյալների մշակման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված պահանջները խախտելու համար վարչական պատասխանատվության կիրառումը:


### **6.1. Անձնական տվյալներ մշակելու օրինականության նկատմամբ հսկողությունը**

Անձնական տվյալների պաշտպանությունն իրականացնում է անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը՝ ՀՀ անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը (այսուհետ՝ Գործակալություն):

Գործակալության գործունեության նպատակն է ապահովել մարդկանց անձնական տվյալների պաշտպանությունը, որը հիմնականում իրականացվում է անձնական տվյալների մշակման օրինականությունը ստուգելու միջոցով: Գործակալությունը անձնական տվյալների մշակման օրինականության ստուգումն իրականացնում է սեփական նախաձեռնությամբ կամ տվյալների սուբյեկտի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի շրջանակներում:



Գործակալության նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու համար հիմք է հանդիսանում ինչպես այլ անձանց, կազմակերպությունների կամ մարմինների կողմից ստացված գրությունները և հաղորդումները, այնպես էլ Գործակալության կողմից իրականացված մշտադիտարկման կամ տվյալներ մշակողներին ուղղված հարցումների արդյունքում ստացված տեղեկությունները:



Անձը, որի մշակվող անձնական տվյալները խախտվել են, իր անձնական տվյալների պաշտպանությունը կարող է իրականացնել **վարչական կամ դատական կարգով**: Վարչական կարգով անձը իր իրավունքները պաշտպանելու համար պետք է դիմում ներկայացնի ՀՀ անձնական տվյալների պաշտպանության գործակալություն, իսկ դատական կարգով պաշտպանության համար պետք է հայցադիմում ներկայացնի դատարան: Եթե Գործակալությանը դիմելու հետ միաժամանակ հայց է հարուցել



նաև դատարան, սպա գործը ենթակա է քննության դատական կարգով, իսկ Գործակալության դիմումի հիման վրա հարուցած վարչական վարույթը ենթակա է կարճման:

## 6.2. Վարչական պատասխանատվությունը

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.17 հոդվածը պատասխանատվություն է նախատեսում Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ անձնական տվյալներ մշակելու համար: Մասնավորապես, տվյալների սուբյեկտի անձնական տվյալները առանց օրենքով սահմանված հիմքերի, առանց օրինական նպատակի կամ օրենքով սահմանված կարգի խախտմամբ մշակելու, ինչպես նաև անձի (երեխայի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցչի) պահանջով մշակողի կողմից տեղեկություն չտրամադրելու կամ տրամադրման կարգը խախտելու, մինչև հատուկ կատեգորիայի և կենսաչափական անձնական տվյալներ մշակելը Գործակալությանը չձանուցելու, անձնական տվյալների անվտանգության միջոցառումներ չձեռնարկելու համար սահմանված է տուգանք: Իրավախախտումների համար նախատեսված տուգանքի չափը տատանվում է 50.000 ՀՀ դրամից մինչև 500.000 ՀՀ դրամ:







Կազմի լուսանկարը` © UNICEF Armenia/2023/Mahari  
Նյութում օգտագործված այլ պատկերներ` ©Shutterstock.

Նյութը վերահրատարակելու, կրկնօրինակելու, տպագրելու կամ թարգմանելու ցանկության դեպքում անհրաժեշտ է ձեռք բերել ՅՈՒՆԻՍԵՖ-ի և ՀՀ անձնական տվյալների պաշտպանության գործակալության գրավոր թույլտվությունը` հարցում ուղարկելով հետևյալ հասցեներին.

ՅՈՒՆԻՍԵՖ, Պետրոս Ադամյան փող. 14, Երևան 0010,  
Էլ. հասցե` [yerevan@unicef.org](mailto:yerevan@unicef.org)

Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն,  
Կոմիտաս 54բ, Երևան 0051, Էլ. հասցե` [info@pdpa.am](mailto:info@pdpa.am)

Չափսը` 60 x84 1/16: Թուղթը` օֆսեթ:  
Տպագրությունը` օֆսեթ: 5 տպ. մամուլ:  
Տպաքանակը` 230

ISBN 978-9939-1-1944-1



9 789939 119441